

148/176

8 =

№ 2 ԿԵՆՏ. ՄԱՆԿ. ԹԱՆԳԱՐԱՆ № 2

Վ. ՊՈՒՆՅԱԿՈՎ



ՊԱՇՏՊԱՆԻՐ  
ԹԻՉՈՒՆՆԵՐԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՏԱՐԱԿՆՈՒՅԻՆ

ՅԵՐԵՎԱՆ-1928



24 JUL 2019

Հ. Ս. Խ. Հ.  
Լ. Ժ. Կ. Սոց. Դաստիարակ. Գլխ. վարչ.

591.6:598.2

Վ. ՊՈԼՅԱԿՈՎ

# ՊԱՇՏՊԱՆԻՐ ԹՈՂՈՒՆՆԵՐԻՆ

Փոխադրութուն

Կենս. Մանկ. քանգարանի աշխատակիցների



Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ի Է Ր Տ Ա Ր Ա Կ Կ ՈՒ Բ Ի ՈՒ Ն

1928—ՅԵՐԵՎԱՆ



№ 2 ԿԵՆՏ. ՄԱՆԿԱՎԱՐԺ. ԹԱՆԳԱՐԱՆ № 2



11-56655 9/2

Գրառեպվար 737 Ը. Կ. 756 Տիրաժ 3000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում—676.

### Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Գյուղի պիտաներական կազմակերպության աշխատանքներն այժմ վորոշակի կերպով փոփոխված են այն մտքով, վոր նրանք իրենց ամենորյա աշխատանքներով պարտավոր են մասնակցել գյուղատնտեսության բարելավման գործին:

Այս գործում գյուղի կազմակերպությունների առջև դրված խնդիրը կայանում է նրանում, վոր այդ մասնակցությունը դառնա մասսայական, աշխույժ յեվ կարողանա հրապուրել վոչ միայն գյուղի կազմակերպված այլ յեվ չկազմակերպված մանուկներին:

Այդ խնդրի իրագործումը կախված է նրանից, թե ինչքան հեշտ յեվ գրավիչ կլինեն աշխատանքի ձեվերը, թե աշխատանքները կազմակերպելիս ինչքան ապահովված կլինի մանուկների ինքնագործունեության զարգացումը:

Վ. Պոլյակովի ժողովածուն գյուղատնտեսության ոգտակար թռչունների պաշտպանության գործում մանուկների մասնակցության հարցը հաջող կերպով միացնում է իր մեջ գյուղի արտադրական ուժերի բարձրացման հսկայական կարեվորությունը—դաստիարակչական մեծ նշանակություն ունեցող դյուրին յեվ գեղեցիկ ձեվերի հետ:

Թեյեվ ժողովածուն գլխավորապես դպրոցն է ի նկատի ունեցել, սակայն նա մեծ չափով կարող է ոգտագործվել նայեվ պիտաներական յուրաքանչյուր կոլլեկտիվում, մանավանդ վոր, թռչունների պաշտպանության մաքսիմում աշխատանքը նպատակահարմար կլինի, վոր դպրոցը յեվ կոլլեկտիվը միասին կատարեն:

Պիտաներները պետք է այս աշխատանքների նախածեռնողները, կազմակերպիչները դառնան յեվ իրենց յետեվից տանեն վոչ միայն դպրոցը, այլ յեվ շրջապատի ամբողջ բնակչությանը՝ առաջին հերթին մանուկներին:

ՀԼԿՏԵՄ ԿԿ Կից պատ. պիտաներ. ԿԵՆՏ. Բյուրո.



Կ Ա Զ Մ Ո Ղ Ի Յ

Մոտիկից ծանոթանալով թռչունների կյանքին, մենք համոզված ենք, վոր թռչունները, չնչին բացառությամբ, հանդիսանում են վնչ միայն մեր այգիները, դաշտերն ու անտառները կենդանացնող գեղեցիկ, ուրախ եյակներ, այլ և յերկրագործի չափազանց կարևոր ոգնականները և բարեկամներն են: Թռչուններն անխոնջ կռիվ են մղում այն վնասատուների դեմ, վորոնք հաճախ վոչնչացնում են գյուղացու ամբողջ տնտեսությունը: Թռչունների վոչնչացրած վնասատուների քանակը հսկայական է: Նրանց տված ոգուտներն անհաշիվ:

Թռչուններին վոչնչացնելով, կամ նրանց համար աննպաստ պայմաններ ստեղծելով, ճիշտն ասած մենք ակնհայտ կերպով ֆրասում ենք ՄԽԶՄ տնտեսական բարեկեցությունը: Մի յերկիր, վոր գերազանցապես յերկրագործական է:

ՄԽԶՄ մի քանի մասերում չափազանց քիչ են թռչունները և սրանց քանակի պակասելն իսկույն անդրադառնում է յերկրագործության վրա:

Սակայն մեզ մոտ վնչ միայն ճիշտ հասկացողություն չունեն մեր փետրավոր դաշնակիցների մասին, այլ և վոչ մի պրոպագանդ չի տարվում բնակչությանը՝ բնության կյանքի և նրա պաշտպանության միջոցների հետ ծանոթացնելու նպատակով:

Այժմ, չերբ գյուղատնտեսության կուլտուրական մակարդակի բարձրացնելը ՄԽԶՄ առաջին հերթի խնդիրներից մեկն է հանդիսանում, չերբ բնության պաշտպանության հարցը դրված է իր ամբողջությամբ, չերբ «անտառի որը» ճանաչված է համամիութենական տոն և ընդհանրապես պետական նշանակություն ունեցող մի խնդիր, անհրաժեշտ է սկսել նաև թռչունների պաշտպանության գործը: «Անտառի որ»-ով հափշտակվելով կարծես թե մոռացել ենք թռչուններին և լուրս ենք ընդհանրապես բուսական կուլտուրաների պաշտպանների մասին:

Մինչդեռ տեղերից ստացված լուրերը ցույց են տալիս, թե ինչ անազին կարիք է զգացվում այնպիսի գրքերի և ձեռնարկների, վորոնք ոգնելին գյուղատնտեսության բարձրացման նը-

պատակով, թռչուններին ուսումնասիրելու և նրանց պաշտպանելու ճիշտ միջոցները ցույց տալով:

Բացց միայն գրքերը բավական չեն: Հարկավոր են աշխույժ, չեռանդուն, և գործը սիրող մարդիկ:

Իսկ մարդիկ կան՝ կոմյերիտմիության շարքերում կազմակերպված յերիտասարդությունը և պիոներական կազմակերպության մեջ—պատանեկությունն, այս գործը սիրող ուսուցչության հետ մեկտեղ, թռչունների պաշտպանության գործում ակտիվ մասնակցելով, պետք է իրենց յետևից տանեն նաև գյուղի մանուկներին և հասակավորներին:

Պիոներական կազմակերպությունը և դպրոցը, վորոնք իրենց աշխատանքը հիմնում են գյուղատնտեսության բարձրացման գործնական մասնակցության վրա, թռչունների պաշտպանությունը պետք է իրենց աշխատանքի մի անբաժան մասը դարձնեն, անա թե ինչ կոչ ենք անում մենք նրանց: Յեվ այս ժողովածուն առաջին հերթին հենց նրանց է նվիրվում:



ԳՊՐԱՅԻ ՅԵՎ ՊԻՈՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ  
ԹՈՒՉՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ  
ԸՆԳԻՅԱՆՈՒՐ ՊԼԱՆ

«Բնության հետ հաղորդակից լինելը  
յուրաքանչյուր մարդու մեջ անխուսափե-  
լիորեն զարթեցնում և զարգացնում է սեր  
դեպի կենդան եյակները, իսկ առանց այդ  
սիրո անհնար է բնության պաշտպանու-  
թյան կանոնավոր կազմակերպումը»:

ՎԱՆ-ԲՐԵՅՍԵԼ

Մանուկները կենդան բնության և մասնավորապես  
թռչունների բնական դիտողներն են: Բայց այդ դիտողու-  
թյունը հաճախ կասկած է թռչունների, նրանց բների,  
ձվերի և ձագերի վոչնչացման հետ, վորը քիչ չէ նպաս-  
տում թռչունների քանակի նվազելուն: Մինչդեռ փորձերը  
ցույց են տվել, վոր կենդանիների այդ անգիտակից վո-  
չնչացնողներին հեշտությամբ կարելի չէ դարձնել բնու-  
թյան ամենաառաջին ժբարեկամ» և «պաշտպան»:

Շատ պարզ է, վոր դպրոցն ու պիոներ կազմակեր-  
պությունն է, վոր կարող են այդ բեկումն առաջ բերել  
մանուկների մեջ, հետաքրքրություն զարթեցնել դեպի կեն-  
դան բնությունը, հասկացնել, թե ինչ հսկայական նշանա-  
կություն ունեն թռչունները բնության կյանքում և դյու-  
ղատեսուցության մեջ:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է այն-  
պիսի պլան մշակել, վորպեսզի մանուկները դպրոցում լե-  
զած ժամանակամիջոցում հնարավորություն ունենան հա-  
ճախ և բազմակողմանի կերպով շփում ունենալ թռչուն-  
ների հետ:



Համաձայն մանուկների տարիքի, զարգացման և զեպի թռչուններն ունեցած հետաքրքրության, դպրոցական ամեն հասակում ել հնարավոր է թռչուններին դիտելու և խնամելու վերաբերյալ համապատասխան պարապմունքներ կազմակերպել: Թող այդ եյակները սկզբում մանուկներին միայն բավականութուն պատճառեն, նրանց համակրանքը վայելեն, վորից հետո ինքն ըստ ինքյան առաջ կգա նաև թռչուններին կերակրելու ցանկութուն, հնարավոր կլինի կանոնավորել թռչունների կյանքի ավելի խորը դիտողութունները: Իսկ ավելի ուշ, գլխավոր ուշադրութունը կդարձվի գյուղատնտեսության մեջ դրական կամ բացասական նշանակութուն ունեցող փաստերին:

Թռչուններին ուսումնասիրելու և նրանց պաշտպանելու անհրաժեշտության գաղափարի ամրացման համար գոյութուն ունեն նաև մասնավոր շատ միջոցներ: Դրանցից մի քանիսը սերտ կերպով կապված են դպրոցական աշխատանքի հետ և կարող են համակել բոլոր մանուկներին, իսկ մյուս միջոցները խմբական բնույթ ունեն: Բայց խմբականն ել կարող է իր նվաճումներին մասնակից դարձնել նաև մանկական ամբողջ կողբկտիվը:

Այստեղ թվենք թռչունները պաշտպանելու և նրանց ուսումնասիրելու գլխավոր միջոցներից մի քանիսը.

1. Դպրոցում «կենդան անկյուն» կազմակերպել, վորպեսզի կենդան նյութերից կազմված այդ լաբորատորիայում հնարավոր լինի կենդանիների, վորոնց թվում նաև թռչունների դիտողութունը կանոնավորել:

2. Կարելի չե «կենդան անկյան» մաս համարել նաև դպրոցի կամ պիոներ կազմակերպության ծառաստան կամ այգին, վորտեղ մանուկների ձեռքով «տնակներ» և «կերամաններ» են կախված թռչունների համար:

3. «Բնության որացուլց» կազմել: Թռչունների վերադարձի մասին որացուլցի մեջ դիտողութուններ գրում

են իրենք չերեխաները և զարդարում են գարնանային թեմաների վերաբերյալ նկարներով և կախում են դպրոցում կամ պիոներական ակումբում մի աչքի ընկնող տեղում:

Բնության զարթնելու մասին որացուցային որագրեր կազմելն ընդհանրապես ոգտակար աշխատանք է, և յերեխաների մեջ անպառ հետաքրքրութուն ու յեռանդ է առաջացնում:

4. Պետք է դպրոցական աշակերտներին և պիոներներին վորքան կարելի չե հաճախ զանազան թեմաներ տալ թռչունների վերաբերյալ դիտողութուններ կատարելու:

Դիտողութունները վերջացնելուց հետո մանուկները պարտավոր են իրենց ընկերների ներկայությամբ մանրամասն գեկուցումներ տալ:

Թռչունների վերաբերմամբ կատարած դիտողութունները յերբեմն կարող են ամբողջ դասարանի պարապմունքի առարկա դառնալ:

5. Մաթեմատիկայի դասերին կարելի չե ոգտագործել թռչունների կյանքից վերցրած չափազանց հետաքրքրական տվյալներ, վորոնք չերեխաներին գաղափար կը տան այն ոգուտների մասին, վոր թռչունները տալիս են գյուղատնտեսությանը:

6. Չեռարվեստի դասերին ավելի հասակավոր աշակերտները և պիոներները կարող են զբաղվել թռչունների համար արհեստական բներ պատրաստելով, վորպեսզի հետո «թռչունների որը» տանեն կախեն դպրոցի շենքի վրա, դպրոցի բակում կամ այգում:

7. Չմեռ չերեխաները պիտի կազմակերպեն սոված թռչունների կերակրումը, կերամաններ ու ջրամաններ պատրաստեն և թռչուններին գրավելու համար այլ հարմարութուններ ստեղծեն:

8. Հարկավոր է դպրոցական թանգարանում կազմակերպել «թռչունների պաշտպանության բաժին», վորտեղ



կհավաքվեն աղյուսակներ, նկարներ, պլակատներ, որացույցներ, հավաքածոներ, չերեխաների գեկուցումները բնության վերաբերյալ իրենց կատարած դիտողությունների մասին, արհեստական բների, կերամանների և թռչունների պաշտպանութան վերաբերյալ այլ պարագանների նմուշները, խմբակի գործունեություն տարեկան հաշվեալությունները և բնության ուսումնասիրություն և պաշտպանություն վերաբերյալ յեղած ամբողջ գրականությունը:

9. Յանկայի յե ամեն տարի ապրիլ ամսին կազմակերպել «ծառատունկի» տոն, վորի ժամանակ ծառեր և թփեր կտնկեն դպրոցի այգում կամ հատուկ հողամասում, հիվանդանոցի, մանկատների և գյուղխորհուրդների մոտ, փոքրոցների և ճանապարհների վրա: Սրա հետ միաժամանակ պետք է կազմակերպել «բնության բարեկամների ընկերության» գործունեության և նվաճումների «որինակելի ցուցահանդես»:

Այսպիսով թռչունների կյանքի և պաշտպանության ուսումնասիրությունը սերտ կերպով կապված կլինի բոլոր տեսակի ուսումնական աշխատանքների հետ: Նկարչության (թռչունների և որացույցի նկարում), գրականության (չափածո և արձակ գրվածքների ընթերցանություն), ձեռարկեստի (արհեստական բներ, կերամաններ և այլն պատրաստել), լեզվի (դիտողությունների հաշվեալություն) և աշխարհագրության (թռչունների շուն), մաթեմատիկայի (խնդիրներ գյուղատնտեսության մեջ թռչունների գերլ վերաբերյալ թվական տվյալներով) և այլն:

Յերեխաների մեջ դեպի բնությունը հետաքրքրություն գարթեցնելուց հետո, առաջ կգա նաև սեր և խրնամքով վերաբերմունք դեպի բնությունը, մանավանդ դեպի հազվագյուտ տեսակները, վորոնք ամենաշերտ պաշտպանության են արժանի, թերևս հենց միայն նրա համար, վոր դրանք մեր աչքերի առջև բաց են անում մեր յերկրի պատմության ամենաուսանելի եջերը:

Անհրաժեշտ է մաքառել բնության հազվագյուտ նրմուշների անխնա վոնչնացման դեմ, վոր կատարվում է սոսկ փոքրիկ հավաքածոներ կազմելու տենչը բավարարելու, կամ նույն իսկ մանուկների թռուցիկ հետաքրքրության համար: Ուստի հարկավոր է խրախուսել մանուկների կողմից անսխտեմ հավաքածոներ կազմելու սովորությունը, վորը հաճախ անուղղակի կերպով վսաս է հասցնում բնությանը:

Դիտողություններն այսպիսով կսովորեցնեն հասկանալ, սիրել ու պաշտպանել բնությունը և կանոնավոր կերպով ոգտվել նրա հարստություններից:

«Բնությանը» մոտենալ, սկսել նրան դիտել— բոլորովին դժվար գործ է, ամենևին բարդ է, միայն ցանկություն է հարկավոր: Յերբ մենք կճանաչենք մեր շրջապատը, կճանոթանանք բնության ուլժերի հետ, վորոնք մեզ բերում են առատ բերք և սով, անձրև և յերաշտ, չերբ մենք կմաքառենք ու վերջ կտանք ոգտակար թռչունների և չերկրագործության այլ բարեկամների վոնչնացմանը, ահա այն ժամանակ միայն հնարավոր կլինի «նորը» կառուցել, այն ժամանակ միայն հնարավոր կլինի մեր տնտեսությունը բարձրացնել: Այս գործը չի կարելի հետաձգել: «Յեթե մենք չեռանդուն կերպով չսկսենք պաշտպանել մեր բնությունն ու նրա փետրավոր բնակիչներին, ապա մենք չենք կարող պատասխանել այն արդարացի հանդիմանության, վորը կանի մեզ մեր մոտագա սերունդը,— վոր մենք չափազանց ուշ ենք արթնացել, վոր մենք չերկիրը հանձնել ենք նրանց անապատ դարձրած» (Շերելման):

Բնության ուսումնասիրության և պաշտպանության միջոցների մեջ իբրև մի վերջնական ողակ, դպրոցին կից պիտի կազմակերպել «բնության բարեկամների մանկական խմբակներ», վորպեսզի մանուկներին վարժեցնենք բնության կենդան եյակներին (բույս և կենդանի) ուսումնաս-



սիրել ազատ, բնական պայմաններում, միաժամանակնաև խնայելով այդ եյակների կյանքն ու ազատութիւնը:

Սմբակի գործունեյության կենտրոնական մասն է կազմելու թուշունների պաշտպանութեան հոգսը, վորովհետև դա ամենակարևոր խնդիրն է, ի նկատի ունենալով թուշունների տնտեսական կարևոր նշանակութիւնը, սակայն դեպի վորոնց շատ չերեխաներ չափազանց թեթևամտորեն են վերաբերվում: Հարկավոր է յերեխաներին բարեկամացնել թուշունների հետ. իսկ չերեխաների միջոցով մասսաներին քաշել թուշունների պաշտպանութեան գործնական աշխատանքների մեջ:

Գյուղում պիտներական կազմակերպութիւնը, չուքաբանչուր պիտներ, թուշունների պաշտպանութեան և նրանց գրավելու գործում լայն աշխատանք պիտի տանի: Պիտներները գործնականորեն պիտի դառնան մեր դաշտերի, այգիների և բանջարանոցների պաշտպան, «փետրավոր բանակի» շեֆը: Պիտներ կազմակերպութիւններն այս աշխատանքների կազմակերպման հետ ծանոթանալուց հետո, ամբողջ տարին, սխտեմատիկ կերպով պիտի այդ գործը տանեն:

Գյուղի պիտներական կազմակերպութիւնը, (վորի հիմնական աշխատանքներից մեկը գյուղատնտեսութեան բարելավման մասնակցելն է) թուշունների պաշտպանութեան գործում մանուկների և հասակավորների գլխավոր կազմակերպողը պիտի դառնա: Տանը, դպրոցում թե փողոցում, խոսքով թե գործով, պիտներները պիտի ապացուցեն թուշունների պաշտպանութեան կարևորութիւնն ու անհրաժեշտութիւնը:

Պետք է առանձնապես շեշտել այս գործի մեջ դպրոցի հետ գործակցելու կարևորութիւնը: Այն, ինչ դժվար է դպրոցում միմիայն պիտներ կազմակերպութեան իրագործել, չափազանց հեշտ է ընդհանուր ուլթերով կատա-

րել: Յուրաքանչյուր պիտներ-խմբակ թուշունների պաշտպանութեան հարցը քննելուց հետո պետք է ամբողջ դրայրոցի ուշադրութիւնը գրավի դեպի այդ խնդիրը՝ պատի լրագրի, աշկոմի և այլ միջոցներով:

Հասարակութեան ուշադրութիւնը գրավելու գործում ահագին նշանակութիւն ունեն թուշունների մասսայական տոները, դիտողութիւնները և ցուցահանդեսները: Պիտներները դպրոցի հետ միասին այս բոլորի կազմակերպողները պիտի հանդիսանան: Յեթե պիտներ-կազմակերպութիւնը թուշունների պաշտպանութեան հարցին ուշադրութեամբ վերաբերվի, այդ դեպքում աշխատանքը կծավալվի: Սյս գործն այնքան հետաքրքիր է, վոր կարող է բոլոր չերեխաներին գրավել, փորձերն արդեն ապացուցել են:

Սակայն վոչ միայն գյուղի, այլ և քաղաքի պիտներները պիտի զբաղվեն այդ խնդրով: Առանձնապես մեծ չափով կարելի չէ այդ հարցով զբաղվել ճամբար (լագեր) գնալու և եքսկուրսիաներ ու զբոսանքներ կազմակերպելու միջոցին: Պիտներները կարող են դիտել թուշունների կյանքը և նրանց պաշտպանութիւնը կազմակերպել:

Ճամբար գնալու ժամանակ պետք է պիտներները զետակ մարդկանցից (բնագետներ, գյուղատնտեսներ, ուսուցիչներ) խորհուրդներ հարցնեն, թե ինչպես ուսումնասիրել թուշունների կյանքը, և թե ինչո՞վ ավելի ոգտակար կարող է լինել պիտներ խմբակը թուշունների պաշտպանութեան գործում:

Պիտներ կազմակերպութեան մեջ կարիք չկա թուշունների պաշտպանութեան առանձին խմբակներ կազմակերպել: Աշխատանքը պիտի տանել ողակներին միջոցով ոգտավելով սույն գրքի մեջ բերված անհրաժեշտ խորհուրդներից: Շատ հնարավոր է, վոր կազմակերպութեան մեջ մանուկների ցանկութեամբ մեկ ողակ առանձնացվի վորպեսզի սա ավելի մանրամասն ուսումնասիրի թուշունների



պաշտպանության և նրանց զբաղելու հարցերը և ապա պատմի ամբողջ կողմերովին:

Դպրոցում թուշուկների պաշտպանության խմբակ կազմակերպելու դեպքում, պիտոներն իրենց աշխատանքի կենտրոնը պետք է այդտեղ փոխադրեն՝ խմբակի աշխատանքներն ամրացնելու համար. իրանք պիտի ակտիվ կերպով մասնակցեն խմբակի աշխատանքին և նպաստեն վորջան կարելի լե շատ աշակերտներ զբաղել:

Պիտոներ կազմակերպության խորհուրդը հաշվի չե առնում պիտոներն աշխատանքն այդ խմբակի մեջ և տալիս է հարկավոր խորհուրդներ:

Պիտոներ կազմակերպութունը պետք է ամբողջապես պատրաստովի մասսայական տոնակատարութունների, ցուցահանդեսների և «թուշուկների դիմավորումներ» կազմակերպելու համար: Այսպիսի դեպքերում պիտոներ-խորհուրդը ողակներին գանազան հանձնարարութուններ է անում (այս կամ այն ողակի պիտոներների ցանկության և ուլթերի համաձայն):

**ԹԻՉՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Բնության մեջ բազմաթիվ կենդան եյակներ կան, վորոնց դեմ կռվելը տակավին շատ դժվար է, վորովհետև դրանց քանակը չափազանց մեծ է: Մեր այդպիսի թշնամիներիցն են միջատները: Միջատների դասին են պատկանում ամբողջ կենդանության առնվազն չերեք քառորդ մասը (բաց հավանորեն ավելի շատ) և դրանց ձնշող մեծամասնութունը մարդու համար վնասակար է: Յեվ վորովհետև միջատների յուրաքանչյուր տեսակն իր մեջ պարունակում է բազմամիլիոն անհատներ, ուստի մենք ստանում ենք մանր թշնամիների մի անթիվ բազմութուն, վորոնք հաճախ վնասում են անմիջապես մարդու որդանիցմին, ընտանի կենդանիներին, բաց ավելի մեծ չափով

բայրացում են մեր բարեկեցութունը վնասելով մեր արտերին, արոտներին, այգիներին, բանջարանոցներին, անտառներին և ընդհանրապես մշակովի բույսերին, վորոնց տված մթերքները ներկայումս մարդու սննդի համար ավելի մեծ նշանակութուն ունի, քան կենդանիներից ստացված մթերքները: Ով առնչութուն ունի չերկրագործության կամ այգեգործության հետ, նա լավ գիտե, վոր վորևե թրթուր չափազանց բազմանալով կարող է տվյալ ամառվա ամբողջ բերքը վոչնչացնել:

Բացի այդ, բուսակեր միջատների նուշիսկ սովորական, առանձնապես աչքի ընկնող գործունեյութունը մեզ անընդհատ վնասներ է պատճառում, իսկ դրանց դեմ ձեռք առած կռիվը բույսերի մշակութունը բարդացնում ու թանկացնում է: Առանց չափազանցելու կարելի չե ասել, վոր յերբ հաջողվեր վնասատու միջատներից բոլորովին վոչնչացնելու միջոց գտնել, ապա բույսերի մշակույթը վերին աստիճանի կդյուրանար և տված արդյունքը մի քանի անգամ կավելանար:

Բայց այդպիսի միջոց չկա և դժվար է հուսալ, թե չերբեկից կգտնվի:

Այս կամ այն միջոցով մենք կարող ենք մեր այդ մանր թշնամիների քանակը նվազեցնել, բայց այդ միջոցները շատ ժամանակ, աշխատանք և ծախս են պահանջում, իսկ արդյունքները միայն ժամանակավոր են, վորովհետև վոչնչացրած միլիարդավոր վնասատուների փոխարեն նոր միլիարդներ են առաջանում:

Վնասատուների դեմ տարվող այդ պայքարի մեջ մեզ դաշնակիցներ են հարկավոր, իսկ այդպիսի դաշնակիցներ են հանդիսանում մեզ համար մանր չերբեկիկ թուշուկները, ավելի խոշոր գիշատիչները և մագլցողներից մի քանիսը: Մոտավորապես հաշված է, վոր կարմրատուտը մեկ ամառվա ընթացքում մեկ միլիոնից ավել զանազան մի-



Ղատներ և վոչնչացնում: Յախսարեկը, արքայիկը, մեկ տար-  
վա ընթացքում մոտ չորս միլիոն միջատ են վոչնչացնում:  
Յերաշտահավը, վոր գլխավորապես միջատների ձվիկնե-  
րով և կերակրվում, հավաքելով դրանց ծառերի վրայից  
թե ամառը և թե ձմեռը, մեկ տարվա ընթացքում վեց և  
կես միլիոն միայն ձվիկներ և վոչնչացնում:

Նույն կերպ են աշխատում նաև այլ չերաշտահավերը,  
խաղտանիկները, ցախսարեկները, շահրիկները, սոխակնե-  
րը, տարմահավերը (ժեռ) փայտփորները, սիտեղները,  
այծկերները, ծիծեռնակները և ուրիշ շատ թռչուններ:

Չանազան չերկիրներում հողի վորոշ տարածության  
վրա թռչունների վերաբերմամբ հավաքած տեղեկութուն-  
ները և թռչունների կողմից վորոշ ժամանակամիջոցում  
վոչնչացրած միջատների հաշվումները մեզ չափազանց հե-  
տաքրքիր փաստեր են տալիս:

Առանձնապես թանգարժեք են Վաշինգտոն քաղաքի  
(Մանրիկա) թռչունների գյուղատնտեսական նշանակու-  
թյունն ուսումնասիրելու համար 1885 թվին հիմնված կեն-  
սաբանական բյուրոյի կողմից հավաքված փաստերը: Ա-  
մեն տարի այդ բյուրոն ցուցակագրության և չենթարկում  
հանրապետության արևելյան մասի ամենախիտ բնակեց-  
րած նահանգներում բուն դրած բոլոր թռչունները:  
Այդ նպատակով կենսաբանական բյուրոն հազարավոր  
հարցաթերթիկներ և ուղարկում դպրոցներին և թռչնա-  
սերներին:

Բյուրոն պարզել և, վոր Ֆերմերական հողի յուրա-  
բանչյուր ակը (900 քառ. սաժեն) տարածության վրա  
մոտավորապես մեկ զույգ վորևե թռչուն և բուն դնում:  
Այսպիսով բյուրոն հաշվել և, վոր Միսսիսիպի գետից դե-  
պի արևելք տարածվող Ֆերմաներում, վորոնք համարյա  
ՄեշՄ լիբոպական մասի չափ տարածություն են բունում  
մոտ 350 միլիոն զույգ թռչուն և բուն դնում: Բյուրոն

ստույգ կերպով հաշվել և նույնպես, թե հանրապետու-  
թյան այդ մասում վոր թռչունից քանի զույգ և ապրում  
և թե դրանք բոլորը միասին ինչ հսկայական քանակու-  
թյան միջատներ են վոչնչացնում: Բազմաթիվ դիտողու-  
թյուններով հաստատված և, վոր ճնճողուկի մեկ ձագը,  
սոված չմնալու համար որական միջին թվով 50 միջատ  
պիտի ուտի: Հետևապես ճնճողուկի մեկ բունը, վոր 5 ձագ  
ունի, որական միջին հաշվով 250 վասաստու միջատ և  
վոչնչացնում: Ճնճողուկի ձագերի կերակրումը 30 ուր  
և տեղում, կնշանակի այդ ժամանակամիջոցում ճնճողուկի յու-  
րաքանչյուր ընտանիք իր սննդի վրա 7500 միջատ և գոր-  
ծադրում:

Յուրաքանչյուր թրթուր սովամահ չլինելու համար  
որական այնքան տերև կամ ծաղիկ պիտի ուտի, վորքան  
ինքն և կշռում: Յեթե ընդունենք, վոր թրթուրն որական  
միայն մեկ խնձորի ծաղիկ կուտի, վորն ապագայում պի-  
տի պտուղ դառնար, ապա ուրեմն այդ թրթուրը 30 ո-  
րում 30 ծաղիկ կուտեր, իսկ 7500 թրթուրը միասին,  
այդ միևնույն ժամանակի ընթացքում 225,000 ծաղիկ  
կվոչնչացնեցին:

Մինչդեռ թրթուրն իր ագահության շնորհիվ որական  
մի քանի (5-10) ծաղիկ կարող և ուտել: Յուրաքան-  
չյուր այգեգործ հեշտությամբ կարող և հաշվել, թե վոր-  
քան կործենա այն 225,000 խնձորը կամ սալորը, վոր  
պաշտպանվեց ճնճողուկի մեկ ընտանիքի միջոցով:

Կենսաբանական բյուրոն մանրամասն ուսումնասիրե-  
լով ծիծեռնակի կյանքը, պարզել և, վոր ծիծեռնակն իր  
ձագերի համար որական 526 անգամ կերակուր և բերում  
և ամեն անգամ կերակուր և տալիս իր բոլոր ձագերին,  
վորովհետև ամեն վերադառնալով նա մի քանի միջատ և  
բերում: Ապացուցված և նույնպես, վոր ծիծեռնակի բե-  
րած միջատների քանակն որական 3000-ից պակաս չի լի-

11-86 6559





նում: Ուրեմն, ծիծեռնակի մեկ ընտանիքը, չերկու ծնողներին և 3-4 ձագից բաղկացած ամառվա ընթացքում մեկ միլիոնից ավել զանազան վնասատու միջատներ ե վոչընչացնում:

Յեթե ընդունենք, վոր վերևում հիշված տարածության (Միասիսիպի դետից դեպ արևելք գտնված Փերմաների) վրա թռչունների կողմից վոչընչացված միջատներից յուրաքանչյուրն ունի  $2^{1/2}$  սանտիմետր յերկարություն և յեթե այդ բոլոր միջատները շարենք իրար յետևից, այն ժամանակ, ըստ Բյուրոյի հաշվումների, մոտ 400 միլիոն կիլոմետր յերկարությամբ մի շարան կստացվի: Յեվ վորպեսզի այդ շարանի առջևի միջատները կարողանան միանալ յետևի ծայրի միջատներին, հարկավոր ե վոր նրանք շարժվեն մեկ ժամում 160 կիլոմետր արագությամբ և այդ դեպքում միացումը տեղի կունենա 300 տարի անընդհատ շարժվելուց հետո: Յեթե այդ միջատներից 15 մետր լայնության շերտ կազմենք, ապա այդ շերտը յերկրից կհասնի լուսնին, իսկ յեթե 150 մետր լայնության շերտ կազմենք, կարող ե ողակել յերկրագնդի շուրջը:

Գիտնական Ա. Գ. Լեբեգեր հաշվել ե, վոր այն միջատները, վորոնցով թռչուններն են կերակրվում, ՍՆՀՄ տարեկան հետևյալ վնասներն են հասցնում.

Դաշտաբուծության	900	միլ.	ուղբլու
Այգեգործության	40	»	»
Բանջարաբուծության	40	»	»
Անտառներին	300	»	»
Կենդանաբուծության	150	»	»

Ընդամենը 1,430 միլ. ուղբլու:

Մոսկվայի նահանգում միայն կազմելն, վարսակին և ինձորին միջատների կողմից հասցրած վնասները տարեկան վեց միլիոն ուղբլուց անցնում են:

Յեթե թռչունները վոչընչացվեն, այդ վնասներն ել ավելի կմեծանան:

Ուստի առողջ բանականությունը մեզ թելադրում ե ամեն կերպ պաշտպանել թռչուններին:

Արդեն ժամանակ ե թռչունների պաշտպանության գործին անցնելու:

Թռչունների պաշտպանության գործնական ոգուտն հազդին ե և անհաշվելի:

Փետրավոր բանակն արժանի չե պաշտպանության և հովանավորության:



### ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՅ

Թռչուններից փոմանք մարդու կյանքում հսկայական դեր են խաղում, իսկ մյուսների, (բաղբրի, կտցարների և այլն) նշանակութունը սովորական պայմաններում չընչին է: Սակայն առաջին խմբի թռչունների «ոգտակարութունն» ու «փաստակարութունը» տարբեր տարիներում խիստ փոխվում է:

Ամենքն ել գիտեն, վոր վորոշ տարիներում միջատները, կրծողները կամ հատապտուղներն ավելի շատ են լինում քան այլ տարիներում: Յեթե վորևե վայրում չափազանց բազմացել են փաստու միջատները, ապա մոտակա անտառներից ու դաշտերից այդ տեղ են հավաքվում թռչուններ և սկսում են վոչնչացնել այդ «փաստուներին»:

Այն թռչունները, վորոնք սովորական պայմաններում կերակրվում են մանր թռչուններով կամ մկներով (բազե, հողմավար, արծիվ) մորեխի տարածման դեպքում բացառապես մորեխներով են կերակրվում: Իսկ յեթե կրծողներն (դաշտային մկները) են չափազանց բազմանում, այն ժամանակ բոլոր այդ գիշատիչները միմիայն դաշտային մկներ են ուտում:

Մեզ մեջ քիչ չեն այն թռչունները, վորոնց գյուղատնտեսական նշանակութունն արդեն բավականաչափ ուսումնասիրված է: Մենք արդեն ունենք պաշտպանության արժանի և պաշտպանության վոչ-արժանի թռչունների ճիշտ ցուցակները: Յերկրագործը յերբեք չպիտի մոռանա, վոր պաշտպանության արժանի թռչուններն ավելի շատ

են: Նույն իսկ փաստակար համարված թռչունների մեջ չկա և վոչ մեկը, վոր մարդուն այս կամ այն ոգուտը չտա: Վնասակար թռչուններին ավելի լավ է միմիայն հանցագործության միջոցին սպանել: Մենք պետք է լավ տարբերենք մեզ ոգտակար եյակներին՝ փաստուներից, բարեկամներին - թշնամիներից. և պարտավոր ենք մեր բարեկամներին ամեն կերպ հովանավորել:

### ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՈՉ-ԱՐԺԱՆԻ ԹՈՉՈՒՆՆԵՐ



Նկ. 1. Թափառական բազե

Թափառական բազե. խոշոր գիշատիչ թռչուն է. վորսում է զանազան թռչուններ:


Արևույտբազե. Գեղեցիկ և արագաթռիչ թռչուն է, մարմնի ձևով և գույնով շատ նման է թաբառական բազեյին, բայց նրանից բավականին փոքր է: Վերադառնում է ծիծեռնակների հետ համարյա միաժամանակ: Պատկանում է այն սակավաթիվ թռչունների խմբին, վորոնք ծիծեռնակներ են վորսում: Բայց արտույտբազեն նաև ոգուտ է տալիս մկներ և միջատներ վոչնչացնելով:

Մարեկան բազե. Բազեների ընտանիքից, վերին աստիճանի փաստակար գիշատիչ է: Վոչնչացնում է մանր



թռչուններին: Մակավ դեպքերում վորսում ե նաև մրկներ և միջատներ:

Մկնարագի յեղեգնի. Պոնտական մկներ, գորտեր, մողեսներ և միջատներ ե վորսում, բայց միաժամանակ նաահագին վնաս ե հասցընում մեծ քանակությամբ ջրային թռչունների ձվեր ու ձագեր լափելով: Աշնանը ոգտակար ե դառնում, վորովհետև այդ շրջանում նա համարյա բացառապես մկներով ե կերակրվում:




Նկ. 2 Մորեկան բազե

ԿԱՍԿԱԾԵԼԻ ԹՈՉՈՒՆՆԵՐ

Կասկածելի թռչունների խմբին են պատկանում նըրանք, վորոնք չերբեմն մեծ ոգուտ են տալիս և չերբեմն ել զգալի վնաս:

ձննդուկներ. Գյուղատնտեսության մեջ ունեցած ոգտակարության և վնասակարության տեսակետից ճնճղուկների կյանքը կարելի չե յերեք շրջանի բաժանել, մարտից մինչև հուլիսի կեսը, չերբ նրանք յերեք անգամ ձագ են հանում, ոգտակար են: Հուլիսի կեսից մինչև հոկտեմբեր, չերբ չերամներով շրջում են կալերը, այգիները, բանջարանոցները—վնասակար են, և վերջապես ձմեռը՝ վոչ

զգալի ոգուտ են տալիս և վոչ վնաս: Ծնճղուկն ամառվա ընթացքում չերեք անգամ թուխս



Նկ. 3. Ծնճղուկ

ե նստում, ամեն անգամ 6 ձու ածելով, հետևապես 4—5 ամսվա ընթացքում կերակրում ե 18 ձագ, այն ել միմիայն միջատներով և դրանց թրթուրներով: Ծնճղուկներն իրենց ձագերին կերակրելով, որական

հազարավոր միջատներ են վոչնչացնում:

Շամփուկ—սեվանակաս. Այս՝ հասակով փոքր բայց չափազանց քաջ՝ թռչուններն ավերում են այնպիսի թռչունների բներ, վորոնք մարմնի մեծությամբ դրանցից յես չեն մտում: Դրանց բնի շուրջը սղնեհուտ, տանձի կամ այլ փշերի վրա կարելի չե տեսնել շամփրած բզեզներ, ճուղիներ, թռչունի ձագեր, գորտեր և այլ կենդանիներ: Կերակրի սակավության դեպքում շամփրուկներն ոգտվում են իրենց այս յուրահատուկ պահեստից: Այս փոքրիկ «զիշատիչները» մեզ քիչ ոգուտ չեն տալիս՝ վնասատու միջատներ վոչնչացնելով. բայց խոշոր միջատներ քիչ չեղած տարիներին դրանք զգալի վնաս կարող են տալ մեծ քանակությամբ թռչունների բներ ավերելով:



Նկ. 4. Կաչաղակ

Մեղվակուլ. Գեղեցիկ թռչուն ե: Կերակրվում ե գանազան միջատներով, բայց ամենից շատ մեղուներով: Հա-



դահատիկների հասնելու շրջանում յերամներով դրանք շրջում են արտերի վրայով և զանազան ֆլատատու միջատներ վորսում: Մեղվակուլներն առանձնապես ֆլատում են մեղվագործներին, այդ պատճառով էլ վերջիններս մեղվակուլների սոսկալի թշնամիներն են, և ամեն կերպ աշխատում են դրանց վոչնչացնել: Բայց այս գեղեցիկ և ոգտակար թռչուններին վոչնչացումից փրկելու համար հարկավոր է մեղվանոցները պաշտպանելու միջոցներ հրնարել:

Կաչաղակն ահագին ոգուտ է տալիս բազմաթիվ վրնասատու միջատներ և դրանց թրթուրները վոչնչացնելով (մայիսյան բզեզ, անգույզ մետաքսաբեր և այլն): Գարնանը և ամառը, թռչունների բազմանալու շրջանում, կաչաղակը վոչնչացնում է թռչունների ձվերն ու ձագերը: Մի քանի օր, բավական է, վորպեսզի կաչաղակը կարողանա իր բնի շուրջը գտնվող բոլոր փոքր թռչունների բներն ափերել: Հետևապես, այն վայրերում, վորտեղ



Նկ. 5. Շամփրուկ.

պաշտպանում են մանր թռչունները, կաչաղակի ներկառութունն անհանդուրժելի չէ:


Ճայր կաչաղակից ավելի քիչ փնաս չի տալիս: Սա նույն պես ափերում է մանր թռչունների բները և նրանց ձրվերն ու ձագերն ուտում է: Իսկ, ընդհանրապես, ճայր միջատներով է կերակրվում, վորոնց թվում քիչ չեն նաև

վնասատուները (մայիսյան բզեզ, անգույզ մետաքսաբերի, թրթուրներ և այլն): Ճայր հաճուքով ուտում է նաև պտուղներ, կաղին և այլն:

Ազուավ մոխրագույն. Յերկրագործի մոտ վատ համբավ ունի: Նա իր բազմանալու շրջանում կերակրվում է կենդանական սնունդով և ահագին ֆլատ է պատճառում թե ընտանի և թե մանավանդ վայրի թռչուններին: Վորոշ դեպքերում ազուավը կարող է նաև ոգուտ ապ միջատներ, դաշտային մկներ և քաղաքում ու գյուղում դուրս թափված ամեն տեսակ աղտոտութուններ վոչնչացնելով:

ՊՍՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ԹՈՉՈՒՆՆԵՐ

Կկու. Մեր թշնամի միջատների մեջ մ ա զ ա պ ա ա թրթուրներ շատ կան, ինչպես որինակ «անգույզ մետաքսաբերի թրթուրը», և շատ քիչ են այն թռչունները, վորոնք համարձակվում են այդ մազապատ թրթուրներին ուտել, վորովհետև նման թրթուրները մեծ մասամբ ծածկված են թունավոր մազերով: Այդ մազապատ թրթուրներից մեծ քանակութամբ վոչնչացնում է կկուն: Բացի այդ, կկուն կերակրվում է նաև ամեն տեսակի այլ



Նկ. 6. Կկու.



միջատներով, բզեզներով, թիթեռներով, ճանճերով և այլն:

Համարյա բոլորն ել գիտեն, վոր կկուն թուխս չի նստում, այլ ձուն ածում և ուրիշ թռչունների, գլխավորապես միջատակերների բներում: Նույնպես ամենքին հայտնի չե, վոր ձվից նոր դուրս չեկած կկուն բնի տիրոջ ձագերին դուրս և ձգում, բայց կկուն իր այս մեղքերը քավում և նրանով, վոր մեծ քանակությամբ վնասատու միջատներ և վոչնչացնում: Հաշվել են, վոր բնից նոր դուրս թռած յերիտասարդ կկուն յերկու ժամվա ընթացքում 160 թրթուր և կերել:

Փայտիոր. Փայտփորի կերակուրը չափազանց բազմազան և փոփոխվում և ըստ տարվա յեղանակների և բնակության վայրի, բայց նրանք գերազասում են միջատներին, վորոնց վոչնչացնելով մեզ ահազին ոգուտ են տալիս: Փայտփորներն անտառների և այգիների անդնահատելի բարեկամներն են: «Կեղևակեր» կոչված փոքրիկ բզեզիկները վորոնք մեծ բազմությամբ հարձակվում են ծառերի վրա, փորփրելով և վնասելով ծառերի կարևոր մասերը չորացնում են նրանց. ահա այդ բզեզիկներին վոչնչացնում են փայտփորները: Նրանք հավարվում են բզեզներով վարակված ծառերի վրա և իրենց ուժեղ կտուցների միահամուռ աշխատանքով անհաշիվ քանակությամբ վրնասատու բզեզներ են վոչնչացնում: Փայտփորները ծառերի կարծր կեղևը կտորելով հնարավորություն են տալիս ավելի թույլ թռչուններին ոգավելու իրենց հարուստ սեղանի մնացորդներին:



Նկ. 7. Փայտփոր.

Իգուր չե, վոր յերաշտահավերը, ծվծվանները և սիտեղներն ամբողջ յերամներով անտառներում փայտփորների «առաջնորդությամբ» են ճանապարհորդում: Չմեռը փայտփորները ծառերի (ասեղնատերև և սաղարթավոր) սերմերով են կերակրվում:

Ալկիոն. Այս թռչունին կաբելի յե տեսնել ջրերի վրա կախված ճյուղերին նըստած, սպիտակ պոչով և չերկար կտուցով: Ալկիոնը վերևի կողմից նածկված և կածոչա-կապտավուն սաղափափայլ փետուրներով և արևի տակ գեղեցիկ փայլ և տալիս: Կերակրվում և ձկնե-րով և ջրային միջատներով: Չկներին նրա հասցրած վնասը չափազանց չնչին և:



Նկ. 8. Ալկիոն.


Ներկարար. Գեղեցիկ և շատ ոգտակար թռչուն և կերակրվում և չերկարագործության վնասատու միջատներով (խառանչուկ, բզեզ, յերբեմն ել մկներով): Այս ոգտակար թռչունը դժբախտաբար հետզհետե վոչնչացնում և վորովհետև նրա գեղեցիկ թևերը գործ են ածվում կանանց գլխարկները զարդարելու համար:

Այծկիթ. Թռչունների մեջ ամենաոգտակարն և կծկված, անշարժ նստում և ծառի ճյուղին կամ գետնին, կարծես քնած լինի, իսկ մթնաշաղն սկսելով կարծես կեն-



դանանում է և սկսում իր ոգտակար աշխատանքը: Նա սահուն, անձայն թռչելով հետապնդում է գիշերային միջատներին և բացի այդ, խոտերի միջից խառանչուկներ, ծղրիտներ և այլ վնասատու միջատներ է վորսում:

Հոպոպ. Չափազանց ոգտակար թռչուն է. կերակրվում է զանազան միջատներով և նրանց թրթուրներով: Հոպոպն առանձնապես մեծ ոգուտ է տալիս բանջարանոցներին՝ մեծ քանակությամբ խառանչուկներ վռնչացնելով, վորոնք չափազանց վնասում են բանջարանոցային բույսերին:



Նկ. 9. Հոպոպ.

Տուլառ կամ սերմնաքաղ ագռավ. շատ ոգտակար թռչուն է: Աշնան վարի ժամանակ համարյա ուղղակի հետևում է գութանին և ժողովում հողի միջի միջատները: Իրանք նաև վնաս են տալիս նոր ցանած արտերից սերմերը հավաքելով, բայց այդ վնասը մեծ չէ: Չագերին կերակրելու շրջանում տուլառներն ավելի մեծ քանակությամբ են միջատներ վռնչացնում: Կրծողներով հարուստ տարիները տուլառները բացառապես մկներով են կերակրվում: Սակավ դեպքում ուտում են նաև թռչունների ձագեր: Այն վայրերում, վերտեղ մորեխը հաճախ ավերածություններ է գործում, տուլառները մորեխների ձվիկների ամենալավ վռնչացնողներն են հանդիսանում:

Ճայսկ. Ամբողջ «սև ընտանիքի» մեջ ճայսկն ամենահամակրելի թռչունն է, միշտ գոհ, շատախոս: Սա տուլառից պակաս ոգտակար չի: Ամբողջ ամառը համարյա բացառապես միջատներով է կերակրվում: Իսկ ձմեռը նա

ամենակեր է: Ճայսկը մասամբ վնասում է բանջարանոցների նոր բուսած ծղերին և այգիների մրգերին:



Նկ. 10. Ճեռ.

Տարմանավ (ժեռ). Խելացի և շատ ոգտակար թռչուն է: Կերակրվում է զանազան միջատներով և նրանց թրթուրներով: Մեծ մասամբ ձագերին կերակրում է խառանչուկներով: Տարմանավն ամառը վնասում է կեռասին, բալին և մասամբ խաղողին: Այսպիսով տարմանավը յերկրագործի, բանջարաբուծի ամենաժրաջան ոգնականն է բայց այգեգործի վնչ:



Նկ. 11. Ամուրիկ.



Վարդագույն արմահավ (թթի դուշ). Սրանք շրջում են մեծ յերամներով, սնվում են նույն կերակրներով, ինչ վոր սովորական տարմահավը: Մեծ քանակությամբ փնասատու միջատներ յերևացած դեպքում, ինչպես, որինակ մորեխի ժամանակ, վարդագույն տարմահավերն անգնահատելի ծառայություն են անում յերկրագործությանը: Վնասում են թթին, կեռասին և սակավ դեպքերում նաև խաղողին:

Արժույթ դաշտային, անտառի, հոտաղխաբուկ և այլն: Բոլորն ել ոգտակար են: Ամառը սրանք գլխավորապես միջատներով և մասամբ ել հատիկներով, իսկ աշնանը, բացառապես, հատիկներով են սնվում:

Յեկեանիկ, սարեկիկ, կանաչուկ, ամուրիկ, կանեփուկ, հսնսան, կորեկնուկ, դրախսապան. բոլորն ել աչքի չեն ընկնում իրենց ուրախ բռնավորությամբ և դուրեկան յերգով: Տարվա տաք յեղանակներին կերակրվում են միջատներով, իսկ փնացած ժամանակը մոլախոտերի և այլ բույսերի սերմերով:

ձաննուսներ. Գյուղատնտեսության պակաս ոգուտ չեն տալիս այս գեղեցիկ թռչնիկները, վորոնք բացառապես միջատներով են սնվում: Հաճույքով բնակություն են հաստատում մարդկանց դրած արհեստական բների մեջ:



Նկ. 12. Ամուրիկի բունը.

Միսեղ յեվ ծվծվան. կերակրվում են միջատներով և թրթուրներով, սրանք ել փայտփորների նման ձմեռները կարողանում են կերակուր ճարել ծառերի վրա, ամբողջ ծառը վերից վար մանրագնին խուզարկության չենթարկելով և ճեղքերից հանելով թագնված միջատներին և նրանց ձվիկները:

Ծիծեռնակ – գյուղի, քաղաքի, ջրափնյա. Անխոնջ, սի-



Նկ. 13. Ծիծեռնակ.

բունիկ և բոլորի կողմից սիրված ու պաշտպանության արժանացած թռչնիկներն են: Անհամար քանակությամբ ճանճեր, մոծակներ, բոռեր, ցեցեր, բզեզներ և այլ մի-



Ղատներ են վոչնչացնում, վորոնք մեծ տանջանք են պատճառում թե մարդկանց և թե անասուններին:




Նկ. 14. Ծիծեռնակ.

Կեռնեխ — յեզեցիկ յեմ սեմ. Գարնանը և ամառը սրբանք կերակրվում են թրթուրներով, իսկ աշնանը զանազան թրփերի տերևներով:

Պիրոլ, կերակրվում է վնասատու մի-


ջատներով և նրանց թրթուրներով: Այս սիրուն յեզեցիկ թռչունն ոգտակարությունը մի քիչ թուլանում է նրանով, վոր նա կտցահարում է բալը, տանձը, խնձորը, վորի հետևանքով այդ վնասված պրտուղները հո-



Նկ. 15. Պիրոլ.

տում և փչանում են: Ուստի պիրոլին այգիներից պիտի քշել, վախեցնել, բայց վոչ սպանել:

Խաղսսնիկներ. Վերին աստիճանի նրբակազմ, սիրունիկ և ոգտակար թռչուններ են: Սպիտակ խաղտանիկները հաճույքով բնակություն են հաստատում մարդկանց բնակարանների մոտ շինված արհեստական բների մեջ:




Նկ. 16. Խաղտանիկ.

Յերսեսահավեր. Բոլորն էլ շատ ոգտակար թռչուններ են: Դրանք մեծ քանակությամբ միջատներ և միջատների ձվիկներ ուտելով մեր այգիների, դաշտերի և անտառների ամենալավ պաշտպաններն են հանդիսանում: Առանձին յերաշտահավերի ստամոքսում 5—6 հազար միջատների ձվիկներ են գտնվել, իսկ դա նրանց որական կերակրի միայն մեկ մասն է կազմում: Այգիների և անտառների պաշտպանության համար պետք է լայն շափով ոգավել յերաշտահավերի ծառայությունից:

Յեղեգնուկ. Այս թռչնիկները թեև մրգեր են ուտում, բայց նրանք միջատներին վոչնչացնելով ավելի շատ ո-



գուտ են տալիս, քան կարող են վասս հասցնել պտուղներ ուտելով:



Նկ. 17. Յերաշտահավեր.

Շահրիկ յեվ ցախաւրեկ. Ծառերի համար շատ ոգտակար, միջատներ ուտող, թռչուններ են, ի միջի այլոց

ուտում են նաև զանազան թփերի հատապտուղներ: Ոգտակարութեան տեսակետից սրանք կարող են յերաշտահավերին հավասարվել:



Նկ. 18. Յեղնճնուկ.

Կարմրասուսն, Շիկահաղ, Սոխակ, Սքանչելի չերգեցիկ, միջատակեր, ոգտակար թռչուններ են: Ամառվա վերջում նաև զանազան հատապտուղներով են կերակրվում:



Նկ. 19. Յախսարեկ.


Սպիտակասնիկ. Բուն է զնում քարերի, ցանկապատերի և ժայռերի արանքում: Կերակրվում է զանազան միջատներով: Շատ ոգտակար է:

Կիվկիվ. Առանձնապես զգալի ոգուտ է տալիս խոտհարքերը վնասող միջատներին վռնչացնելով:



Արագիլ. Ուտում  
 և գլխավորապես սո-  
 դուններ, մկներ,  
 գորտեր և միջատ-  
 ներ:

Մոխրագույն սա-  
 րեղ. Գեղեցիկ թռու-  
 չուն և կերակր-  
 վում և մկներով և  
 այլ կրծողներով:  
 Ապրում և փոքր լը-  
 ճերի և ծանծաղ գե-  
 տերի մոտ:



Նկ. 20 Կիվկիվ.




Նկ. 21. Արագիլ.

Վարդ. Կերակրվում և ձկներով, բայց միաժամանակ  
 ուտում և նաև դաշտային մկներ, միջատներ: Հայաստա-  
 նում սա բուն և դնում Գեղամա լճի ափերում, գարնանն  
 իջնում և նաև դաշտավայրերը:



Նկ. 22. Վորդ.



Նկ. 23 Մովածիծառ.

Մովածիծառ. Արանք շրային ծիծեռնակներ են: Յերբ



չափազանց շատ են լինում ցորենի բզեզները, այն ժամանակ դրանք ամբողջ յերամներով շրջում են արտերի վրայով և մեծ ճարպիկությամբ հասկերի վրայից հավաքում են այդ չափազանց վնասատու բզեզները: Բացի այդ ծովածիծառները նաև ձկներ են ուտում: Ընդհանրապես ոգտակար թռչուններ են և արժանի յեն պաշտպանության: Այս թռչուններին հաճախ կարելի չե տեսնել կանանց գլխարկների վրա «բազմեցրած»:

### ՊԱՇՏՊԱՆԵՔ ԳԻՇԱՏԻՉ ԹՈՉՈՒՆՆԵՐԻՆ

Յերկրագործներից շատերի կարծիքով գիշատիչ թռչուններ են նրանք, վորոնք բակից հավի, բազի ձագեր են տանում կամ վայրի թռչուններ են վորսում: Այդպիսի գիշատիչներից են ձուռակը, հողմավարը, մեղվաբազեն, անտառաբուն, ճահճային բուն, մինչդեռ սրանք բոլորն ել չափազանց ոգտակար թռչուններ են անտեսության մեջ և հաճախ ամբողջ գաղութներով բուն են դնում մարդկանց բնակարանների մոտ: Վորսորդներից շատերը մեծ յեռանդով վոչնչացնում են այս թռչուններին, վորպեսզի «ոգնած լինեն բնությանը»: Մեր գիշատիչներից շատ բըչերն են թռչուններ վորսում, յեթե բավական քանակությամբ մկներ և զանազան կրծողներ կան: Իսկ ընտանի կատուն ընդհակառակը, մկներին բոլորովին ձեռք չի տալիս, յերբ նա կարող ե թռչուններ բունել: Յեթե նույնիսկ յերբեմն այդ գիշատիչները վնաս են հասցնում մեկ աղամսի կամ հավի ձագ բունելով, սակայն այդ վնասը վոչինչ ե համեմատելով այն ահագին աղետի հետ, վորը նըրանք տալիս են գյուղատնտեսությանը մեծ քանակությամբ վնասատու կրծողներ վոչնչացնելով: Ուստի այս ոգտակար թռչունները միանգամայն արժանի յեն մեր պաշտպանության և դրանց հարկավոր չե վոչնչացնել:

Այս գիշատիչների խմբին են պատկանում՝

Ջրարծիվ. Գլխավորապես ձկներով ե կերակրվում:

Կարիք չկա այս սակավաթիվ թռչուններին վոչնչացնել, վորոնց պատճառած վնասն առանձնապես զգալի չե: Հայաստանում դրանք ապրում են Գեղամա լճի մոտ և Ծաղկաձորի շրջանում, Հրազդանի ափերին:


Հողմավար. Սիրած կերակուրն ե՝ մկներ, ուղղաթև միջատներ (մորեխ, ճոխկ և այլն): Թռչուններից սրան պատճառած վնասը չնչին ե:

Հողմավար սալխասանի. Թռչունների վրա չի հարձակվում, կերակրվում ե գլխավորապես մկներով, մորեխներով և այլ միջատներով: Արժանի չե պաշտպանության: Հայաստանում սակավաթիվ են:

ձուռակ. Գլխավորապես մանր կրծողներով, միջատներով և շատ սակավ դեպքերում թռչուններով ե կերակրվում: Որական մինչև 50 մուկ ե վոչնչացնում և շատերին ել վորսի ժամանակ վիրավորում ե: Յեթե ընդունենք, վոր նա որական թեկուզ 20 մուկ ե վոչնչացնում, դարձյալ նրա մեկ ամառվա տըրված ոգուտն ահագին կլինի:

Ուրուր (ցիլն). Մեծ քանակությամբ դաշտային մկներ ե վոչնչացնում և դրանով մեղմացնում ե այն վնասը, վոր նա պատճառում ե գյուղացիներին մեկ հավի կամ բազի ձագ փախցնելով:

Մկնաքաղցնեռ. Սրանք նույնպես արժանի յեն մեր հովանավորության, ոգտակար են մանավանդ մեծ քանակությամբ մկներ յերևացած տարիները: Մկնաբազենները գիշատիչների մեջ ամենաոգտակարներն են: Սրանք «արտերի հակիչներն» են, ամբողջ որը զբաղված են այս և այն կողմ թռչելով և մկներ վորսալով: Ի հարկե սրանք



Նկ. 24. ձուռակ.



ևս բոլորովին անմեղ չեն, սրանք էլ սիրում են յերբեմն մի հավի ձագ կամ մոլորված լորամարդ փախցնել, թեև նրանց այնքան էլ այդ չի հաջողվում: Մկնաբազկների առանձնահատուկ նշանը նրանց գլխի վրայի «վիզկապն» է, վորը նրանց մի քիչ «բուխ» տեսք է տալիս:

Բու, (բուեն, ականջավոր բու, նահնային բու, անսառարու լեվ այլն). Մրանք բոլորն էլ դաշտային մկներն է և այլ կրծողների ամենահոտանդուն վոչնչացնողներն են:



Նկ. 25. Բուեն:

Ի միջի այլոց ժողովրդի մեջ դեպի բուերը, ինչպես և դեպի զողոշները, չըղջիկները և գիշերային կյանք վարող այլ եյակները չափազանց անբարչացակամ վերաբերմունք է արժատացած: Յեթե մեր գյուղացիներն իմանային, վոր այդ անհրաժեշտ եյակները պատկանում են յերկրագործության և այգե-

գործության ամենաոգտակար բարեկամների խմբին, ապա անկասկած նրանք կփոխեյին դեպի այդ թռչուններն ունեցած իրանց վերաբերմունքը:

Արտասահմանում վաղուց արդեն գնահատել են բուերին և ամեն տեղ անտառներում, այգիներում և բնակարանների վրա արկղներ են կախում, վորպեսզի բուերը դրանց մեջ բնակութուն հաստատեն:

Արծիվներ. Բոլոր տեսակի արծիվներն էլ թեև վնաս են տալիս թռչուններ վորսալով, բայց նաև ոգուտ են տալիս զանազան կրծողներ վոչնչացնելով:

**ԹԻՉՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արտասահմանյան, միանգամայն վատահելի շատ հրատարակութունների մեջ խոսվում է այն մասին, թե ինչ մեծ ոգուտ կարող են տալ թռչունները, յեթե մենք նրանց զրավենք, և պաշտպանենք մեր այգիներում և ան-

տառներում: Մենք այստեղ կրերենք առանձնապես ավելի հետաքրքիր փաստեր, վորոնք թռչունների ոգտին շատ բան են ասում:

Որինակ. Վենգրիացի մի պատկառելի այգեգործ հաղորդում է այն հետևանքների մասին, վոր նա ստացել է իր այգում ոգտակար թռչուններին պաշտպանելով և նրանց կերակրելով:

«Իմ այգում, ասում է նա, 120 արհեստական բուն են կախել և ձմեռը թռչուններին կերակրում եմ յերեք կերամաններից: 1912 թվին իմ այգում 110 զույգ ոգտակար թռչուններ ձագեր եյին հանել: Դրանցից 40 զույգը յերկրորդ անգամ թուխս նստեց: Իմ այգում միանգամից կարելի յեր 200 յերաշտահավ տեսնել: Ամառվա վերջում թփերի մեջ և ծառերի վրա կարելի յեր 200 դատարկ բուն գտնել: Ձմեռը կերամաններից 100-150 քաղցած յերաշտահավեր եյին կերակրվում: Շատ վնասատու միմիջատներ իմ այգուց միանգամայն անհետացան, այդ տարին այգուս հավաքած խնձորները շոկելու ժամանակ յես հետևյալը նկատեցի. առաջներում (մինչև թռչուններին պաշտպանելու) 100 հասած խնձորից միայն 5-10 հատ առողջ խնձոր եր լինում, իսկ մնացածը վորդնած եր լինում, իսկ այդ տարին 100-ի մեջ հազիվ կարելի յեր 2-4 հատ վորդնած խնձոր գտնել»:

Մի այլ այգետեր մրգերի բերքի վերաբերմամբ 15 տարվա ընթացքում իր կատարած դիտողութունների մասին հետևյալն է գրում. «14 տարվա ընթացքում իմ այգու 350 ծառից տարեկան 240 ուռք. բերք եյի ստանում: 1909 թվին այգում կախեցի արհեստական բներ, վորոնց մեջ իննը զույգ յերաշտահավ բուն դրեց և այգու բերքը այդ տարին բարձրացավ մինչև 760 ուռբյու»:

Ահա մի այլ փաստ, վոր սքանչելի կերպով պարզաբանում է այն նշանակութունը, վոր ունեն «սև ընտա-



նիքին» պատկանող թռչունները մեր դաշտերի համար. «1924 թ. սեպտեմբերի սկզբներին Մոսկվայի նահանգի Բրոնիցկի գավառի Սինկովո գյուղի արտերում վորդեր յերևացին (աշնանացանի վորդ, գիշերային թիթեռի թըրթուր ե) վորոնք սկսել էին նոր բուսած արտերը մեկը մյուսի յետևից ամառացներ: Գյուղացիք իրար անցան: Հարևան գյուղերը նույնպես սկսեցին անհանգստանալ: Մարդ ուղարկեցին գյուղատնտեսի մոտ և նրա խորհրդով սկսեցին խրամատներ փորել, վորդերի առաջխաղացումը կանգնեցնելու և նրանց վոչնչացնելու համար: Իսկ թրթուրներն այնքան շատացան, վոր մեկ քառակուսի մետր տարածության վրա կարելի չեր մինչև 30 հատ գտնել: Բայց ահա ահագին յերամներով տուլաշներ, ճայակներ և ագռավներ յերևացին և սկսեցին քեֆ անել, ագահաբար ուտելով չուղալի թրթուրներին: Իրանց յերկար կտուցներով դուրս ելին հանում նույնիսկ հողի ճեղքերում թագնված թրթուրներին:

Սկսված դժբախտությունը 5-7 որում վերջացավ: Գյուղի ոգտին աշխատեցին այն թռչունները, վորոնց մինչ այդ գյուղացիք չէին սիրում (Московская деревня, 1925 թ. № 107).

Գյուղատնտեսության մեջ թռչունների պաշտպանության կարևորության մասին բերենք այժմ մի քանի բնագետների և գյուղատնտեսների կարծիքները:

Ֆրանսական հողագործության տեսուչ Բատանշոնը, վորը յերկար ժամանակ զբաղվել է թռչունների պաշտպանության գործով, ասում է. «Բուսականության սուկալի վնաս հասցնող միջատների դեմ կռվելու գործում ամենալավ ինսեկտիսիդները վոչինչ են համեմատած մի քանի գույգ յերաշտահավերի, շահրիկների և այլ մանր թռչունների հետ: Այդ մասին Ֆրանսիայում չգիտեն և այդ չիմանալը շատ ցավալի չե, վորովհետև դրա հետևանքով տարեկան բազմաթիվ միլիոնների վնաս է հասնում»:

Թռչունների պաշտպանության կարևորության մասին կանադացի միջատաբան Գեվիտաը հետևյալ կերպով է արտահայտվում. «XX-րդ դարի ամենալավ ինսեկտիսիդները թռչուններն են: Արագաթուիչ թևեր, սուր տեսողություն, ուժեղ կտուց—ահա այն սքանչելի հարմարությունները, վորով ոժտված են այդ զարմանալի եյակները վրնասատու միջատների և կրծողների դեմ կռվելու համար»:

Միջատների վրա դիտողություններ կատարող Ֆրանսիացի հայտնի գիտնական Ֆաբըրը պնդում է, վոր «յեթե բոլոր թռչուններին վոչնչացնենք, անմիջապես սով կընկնի»:

Թռչունների ոգուտը չափազանց մեծ է և չի կարելի անուշադրության մասնել դրանց հսկայական նշանակությունը ՍՍՀՄ-ի նման մի գյուղատնտեսական յերկրում: Բազմաթիվ գիտական աշխատությունների մեջ վնասատու միջատների դեմ կռվելու գանազան միջոցների հետ մեկտեղ շատ ուժեղ կերպով խորհուրդ է տրվում, պաշտպանել թռչունների բները, ձմեռը կերակրել նրանց և զրավելու համար արհեստական բներ կախել: Բայց և այնպես մինչև այժմ մեզ մոտ չի արմատացել թռչունների պաշտպանության և նրանց զրավելու անհրաժեշտության համոզմունքը և մեր անգավաճան բարեկամներից շատերը վոչնչանում են ցրտից, քաղցից և մարդկանց անգիտակից վերաբերմունքից: Մեզ մոտ ամենալավ դեպքում թռչուններին վերաբերվում են անտարբեր, իսկ հաճախ ուղղակի բարբարոսաբար, անգուժ կերպով: Ժամանակ է, վոր մենք ել միանանք փետրավորների անկեղծ պաշտպաններին, մանավանդ վոր, թռչունների պաշտպանությունը վնասատու միջատների դեմ կռվելու ամենահեշտ, եժան, վստահելի, հաճելի և բնական միջոցն է: Թռչունների պաշտպանությունն առանձնապես կարևոր նշանակություն ունի այգիների, պարտեզների և անտառների համար, վորովհետև այդ տեղերում ոգտակար թռչունների համար բուն դնելու հարմար տեղեր ստեղծելը չափազանց հեշտ է:



ՍԵՉՈՆԱՅԻՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ  
ԿՅԱՆՔՈՒՄ

Աստղաբաշխների համար ամբողջ հյուսիսային կիսագնդում գարունն սկսում է մարտի 22-ին, իսկ կենդանի բնությունն ուսումնասիրող բնագետի համար զանազան յերկրներում գարունն սկսվում է տարբեր ժամանակներում, վորքան դեպի հյուսիս, այնքան ավելի ուշ: Բնագետի համար գարնան սկիզբ համարվում է տարափոխիկ թռչունների վերադարձի առաջին օրը:

Պրոֆ. Կալգորոդովը յերկար տարիներ լենինգրադի շրջակայքում զբաղվել է գարնանային դիտողություններ կատարելով և զարուհը բաժանում է յերեք շրջանի. 1) վաղ գարնանային շրջան, վոր սկսվում է մարտի վերջերին կամ ապրիլի սկզբներին և դնում է սուլառների յերևալուց (մարտի սկզբին) մինչև սառհալքը. 2) գարնան միջին շրջան, վոր տևում է սառհալքից մինչև վողկույզաբե կեռասի բացվելը (ապրիլի վերջը կամ մայիսի սկիզբը) և վերջապես 3) գարնան վերջին շրջան, վոր սկսվում է վողկույզաբե կեռասի բացվելուց մինչև լեփոռուկի (յասաման, հազարագեղ) ծաղկելն ու թառամելը:

Ամենից շուտ վերադարձող և ամենից շատ աչքի յերևացող թռչուններն են սուլառները: Նրանց վերադարձն արդեն գարնան գալու նշան է, այդ պատճառով նրանց առաջին անգամ յերևալու օրը, պետք է առանձին ճշտությամբ նշանակել:

Տուլաշներին հետևում են արսույսները և անմիջապես սկսում են իրենց քաղձրահնչյուն յերգն արտերում: Գյու-

ղական խրճիթների մոտ լսվում է սեվ տարմահավերի ուրախ ծղվոցը:

Մարտ ամսից արդեն յերևում են նրնքանը կամ կրսվաճի սերինոսը, դրախսապանը, կանեփնուկը և ռիկահավը: Անտառում յերգում է անճառի արսույսը կամ խաղախնիկը, իսկ մարտի վերջին յերբեմն լսվում է յերաւեսահավի յերգը: Վաղ գարնան վերադառնում են մի շարք այնպիսի թռչուններ, վորոնք սովորաբար ցուրտ յեղանակներին ավելի ուշ են յերևում այս կողմերը:

Ինչ արագությամբ են թռչում տարափոխիկ թռչունները: Նրանք գարնանը դեպի հյուսիս թռչելիս ավելի արագ են գնում, քան թե աշնանը — դեպի հարավ: Նրանք ընդհանրապես մի օրվա ընթացքում անցնում են 300 մղոնից-վոչ ավել, բայց պատահում են այնպիսիները, վորոնք զարմանալի արագությամբ են թռչում. նրանց հետ միայն սավառնակները կարող են մրցել: Ագռավները, վորոնք թռչելու արվեստում շատ ել հայտնի չեն, բայց յերեք ժամում անցնում են Գերմանական ծովը: Նրանք մի ժամում 215 կիլոմետր տարածություն են կտրում: Այդ կողմից ավելի աչքի յեն ընկնում ծիծեռնակները կամ կապսափողերը, վորոնք մի ժամում 320 կիլոմետր ճանապարհ են կտրում, այնպես վոր մեկ գիշերվա մեջ Յեզիպոսից Բալտիկ ծովի Հելգոլանդ կղզին են հասնում...:

Ահա մեկ ուրիշ օրինակ, վոր զարմանքի և հիացմունքի յե արժանի. սևագլուխ քարադրիուսը ձմեռում է Աֆրիկայում, արևի մայր մասերուց մինչև արևածագը, առանց հանգատանալու կատարում է 3000 կիլոմետր տարածություն: Յեթե Աֆրիկայից դուրս է գալիս յերեկոյան ժամը 7-ին՝ հետևյալ օրը, առավոտյան ժամը 5-ին նա հասած է լինում հյուսիսային տունդրաները:

Գրի առեք վերադարձող թռչուններից ձեզ ծանոթների անունները և նրանց, վորոնց առաջին անգամ բաղբ ունենում հանդիպելու:



Յեթե ձեզ մոտ կան ժեռերի բներ, նշանակեցեք, թե նրանք չէրք վերադարձան, ի՞նչ են անում, վերջան ժամանակից հետո թուխս են նստում: Նշանակեցեք ձեր հուշատետրերում ամիսը և ուրը:

Դիտեցեք, թե վերադարձող թռչուններն ի՞նչպես են գալիս, հատ-հատ, զուգերով, թե՛ յերամներով:

Գնացեք անտառ, պուրակ կամ պարտեզ, դիտեցեք այնտեղի կենդանի կյանքը և աշխատեցեք գրի առնել ինչ վոր կտեսնեք:

Գալիս է ապրիլ ամիսը, դա վերադարձող թռչունների ամենազլխավոր ամիսն է: Այդ ժամանակ է, վոր պետք է աշխատեք դիտողութուններ կատարել, թռչունների կենցաղի և վարքի վերաբերյալ բազմատեսակ դիտողութուններ: Այդ դիտողութունները մեծ աշխրջութուն և ուշադրութուն են պահանջում, բայց միևնույն ժամանակ պետք է ասել, վոր հազիվ թե գտնվի մի այլ հաճույք դրան հավասար, չերք մարդ ստանում է բնության ուսումնասիրությամբ պարապելիս: Այդ դիտողութուններով կարելի չե ամեն տեղ պարապել, վորտեղ թռչուններ կան: Ամեն վայր ունի իր հատուկ թռչուններ, անտառն՝ իրը, դաշտն՝ իրը, ձահիճն՝ իրը և այլն: Շնորհիվ իրենց արագաշարժության՝ թռչուններն ավելի շատ են աչքի ընկնում, քան թե գահանները: Յեթե համբերութուն ունեք և լավ դիտակ, ապա, կարող եք հեռվից դիտել նույնիսկ այնպիսի թռչուններ, վորոնք պատահական դիտողի աչքին միշտ աննկատելի կը մնան:

Ապրիլ ամսում նկնդուկները գառնում են կովարար, նրանց մեջ նկատվում է մեծ իրարանցում, զբաղվում են բուն շինելու, ձու ածելու և թուխս նստելու հոգսերով:

Ազոավներն ու Կայակներն անհետանում են քաղաքից. նրանք ցրվում են շրջակայքի անտառներն ու պուրակները և միայն իրենց ընտանեկան հոգսերով են զբաղված:

Կաչալակները հանկարծ թողնում են քաղաքն ու նրա արվարձանները և նորից գնում են իրենց հայրենի խիտ անտառները: Այնտեղ, թփուտների մեջ շինում են իրենց ճարտարարվեստ ու թագուն բները:

Ապրիլին հեռու ձմեռանոցներից բազմաթիվ յերամներով գալիս են բազմաթիվ թռչուններ և շտապ կերպով գնում են իրենց հերվա թողած բները: Իսկ վոր թռչուններն են, վորոնք յերևում են ապրիլին:

Հենց վոր գետնի սառույցները բացվում են, յերևում են գետի կերակուրներով սնվող թռչունները: Գնացեք գետեզրի լայնարձակ մարգագետինը, վորտեղ վարարած ջուրը «լճացել» է թփերի և ծառերի արանքում: Ականջ դրեք և դիտեցեք, թե ի՞նչ է կատարվում այնտեղ, ձեր շուրջը: Վարարած ջրի վրա ձախրում են նոր վերադարձած ուռուները: Ծանծաղ ջրերում լողացող ձկներով հրապուրված՝ այնտեղ են շտապում բազմատեսակ ձկնակեր թռչուններ, նրանց թվում և սպիտակակուրծք և մոխրագույն ծովածիծառը, ջրածիվը, մի գիշատիչ թռչուն, վոր բացառապես ձկներով է կերակրվում և ջրուզակը: Փոքրիկ կրսցարները ծվծվալով մեկ ծանծաղուտից մյուսն են թռչում:

Գետերի ծանծաղուտներում և վարարներում ապրիլի սկզբներում յերևում են փնջավոր յեղսուրիկները կամ կիվկիվները: Ծահիճների վրա լսվում է վայրի կցարի (բեզաս) կոկոցը: Նա չել մյուս թռչունների նման զբաղված է ընտանեկան գործերով:

Դաշտերում յերբեմն յերևում են փոքրաթիվ յերամներով մաւր բազներ, վորոնք նաև «հողմավար» են կոչվում:

Ապրիլի վերջին գալիս են ջրնավը և լուրը, բայց նրանք դեռ ևս թագնվում են, լուռ են և սպասում են մինչև մարգագետնի հյուլթալի խոտերը բարձրանան, վորպես զի հրնարավորութուն ունենան նրանց տակ պատասպարվել և թշնամիների վտանգից պաշտպանվել:



Դաշտերի վրայով, շատ բարձրից սլանում են կռուցի-  
 ցների վերագարձող յերամները: Նրանց յերևալն արդեն գար-  
 նան հաղթանակի նշան է: Կռուսկներն իրենց նրբագգա-  
 ցության շնորհիվ, համարվում են տաք յեղանակների գու-  
 շակներ:

Անտառում առանձին կենդանություն է տիրում: Ար-  
 շալուշսին և վերջալուշսին անտառի շավիղների և բացուտ-  
 ների վրա նկատվում են վալդեյացիների գարնանային շար-  
 քերը\*):

Ավելի շատ են փոքրիկ թռչունները, վորոնք այժմ  
 յերգում են, սուլում և ծվլում:

Մարտի սկզբին հաճախ յերևում են սպիտակ խաղ-  
 սրսնիկները, ամուրիկները և շիկահավը: Ապրիլի կեսից  
 անտառի բացուտներում լավում է կարմրասնի գեղգեղան-  
 քը և սեվագլուխ դրախսապանի յերգը: Զիլ և գեղեցիկ  
 ձայնով դայլայլում են յերգեցիկ կեռնեխները: Վերջապես  
 ապրիլի վերջին գետերի և լճակների խիտ թփուտների մեջ  
 հնչում է սոխակի գորեղ յերգը: Այդ ժամանակ վերա-  
 դառնում են բազմատեսակ մանր յերգեցիկ թռչուններ:

Մարտի վերջին յերևում են ծիծեռնակները, յերբեմն  
 նաև մախալուկները, վորոնք արագ-արագ ձախրում են  
 ողում իրենց բարակ ու յերկար թևերով:

Նրանց յետևից վերագառնում են փոքրիկ թռչուննե-  
 րին հետևող ցիմը, բագեն, նուռակը և մկնարագեն:

Անտառում շատ կան և այնպիսի թռչուններ, վո-  
 րոնք ձմեռը մնում են մեզ մոտ: Նրանցից վոմանք այդ  
 ժամանակ զբաղված են ձուտեր հանելով, որինակ փայս-  
 փորների զանազան տեսակներն ու սեվ ազուավներ:

Ել ինչպիսի ձայներ ասես, վոր չի լավում անտառում,  
 առանձնապես յերեկոյան և առավոտները: Յերեկն ամե-

\*) Մեզ մոտ նրանք կարճ ժամանակից հետո չվելու յեն գե-  
 պի հյուսիս:

նից բարձր հնչում է կեռնեխների զայրացկոտ ձայնը: Նը-  
 րանք արդեն զբաղված են բուն շինելու հոգսերով:

Ապրիլի վերջին արդեն լավում է կկուցների ձայնը:

Թռչուններից շատերն իրենց ձագերին թշնամիներից  
 ազատ պահելու համար շատ ճարտարարվեստ բներ են շի-  
 նում: Այդպիսի բուն շինողներից է ամուրիկը կամ նախ-  
 ռուն սառյակը: Նրա բունը նման է մի թասի, վորի յեղ-  
 րերը շատ բարձր են, ներսը պատած է հարթ մագերով,  
 փետուրներով և խոտերի բարակ ցողուններով: Բնի ար-  
 տաքին յերեսն ավելի հետաքրքրական է. դրսից պատած  
 է իր շրջապատում գտնված առարկաների կտորտանքնե-  
 րով—մամուռ, քարաքոս, ծառի կեղև և այլն: Շնորհիվ այդ  
 առարկաների, բունը դառնում է բոլորովին աննկատելի:  
 Բնի գույնը համապատասխանում է շրջապատի գույնին:

Յախարեկներն իրենց բունը շինում են վոչ թե ծա-  
 ուի վրա, այլ գետնի և աջն ել շատ աննկատելի, վորովհե-  
 սե բնի վրայից ծածկում են չոր տերևներով, մամուռի  
 շյուղերով և չոր խոտի ծղոտներով, իսկ յելքը բաց են  
 թողնում մի կողքից: Այնպես վոր՝ կարծես թե ձեր առաջ  
 տերևների է չոր խոտերի մի կույտ է դրված: Ամբողջ  
 շենքը թռչունի բնի նմանություն չունի, այլ ավելի շուտ  
 մի կույտ, վորպիսի կույտերով անտառի գետինն է ծածկ-  
 ված: Յախարեկի բունը գտնելու համար պետք է պա-  
 տահաբար նրան յըրանցես և ստիպես, վոր նա դուրս  
 թռչի:

Բացի վերոհիշյալ բներից, վորոնք իրենց կառուցված-  
 քով մեզ զարմանք են պատճառում, կան նաև ուրիշ շատ  
 տեսակի բներ, վորոնք ավելի կատարելագործված շենք  
 ունեն:

Շատ հմուտ բուն շինող է պիրուլը: Նա իր բունը շի-  
 նում է յերկար և չոր ճյուղերի արանքում և բուսական  
 հյուսվածքներով ճոճքի նման յերկար կախ ձգում:



Կան մեծ քանակութեամբ թռչուններ, վորոնց բները վոչ միայն առանձին գարմանք չեն պատճառում, այլ ընդհակառակը, յերբեմն գարմանում ես նրանց չափազանց պարզ ու անկատար դրութեան վրա. որինակ՝ սղալվիները, այծկիբները, փայտփորները, սառեղները և ուրիշներն իրենց ձվերն ածում են ծառերի փշակների մեջ:

Յերբ թփերի մեջ, պուրակում կամ վորևե ուրիշ տեղ թռչունի բուն գոնեք, չքանդեք և առհասարակ ձեռք չը տար: Մինչև անգամ դիտելն ել պետք է շատ զգուշութեամբ անեք, վորպեսզի թռչուններին չվախեցնեք: Մի քանի անգամ անհանգստացրած թռչունն արդեն թողնում է իր բունը և նրա մեջ ածած ձվերը. դրանով, իհարկե, չուք պատճառ կլինեք, վոր իզուր տեղը նրա ձվիկներից դուրս յեկող ձագերը կորստի մատնվեն: Ամեն ուր կարող եք գնալ անտառ կամ այգի, նստել մի հատուկ տեղ, առանց աղմուկի, առանց խիստ շարժումների և դիտել, թե այսինչ թռչունն ի՞նչ պայմաններում է ապրում, ի՞նչպես է բուն շինում, ինչո՞վ է կերակրվում, վորտեղից է իր կերակուրը բերում, այդ թռչունը կամ նրա բուչնը գոչն ունի թե վոչ և այլն: Բնի մանրամասն ուսումնասիրությունը պետք է հետաձգել մինչև վոր ձագերը մեծանան և թռչեն: Միայն չպետք է մոռանալ և լավ հիշել, թե բունն ի՞նչ դիրք ունեք, և ավելի ուշ, յերբ բունը բոլորովին դատարկվում է, նոր կարող եք գալ, վերցնել և տանել, յեթե այդ անհրաժեշտ է ձեր հավաքածուների շարքը լրացնելու համար:

Յեթե անխեղ չերեխաներից մեկը մի թռչունի բուն ավերելով նրա ձագերը բերում է՝ ձեզ, դուք նրանց չվերադարձնեք անտառ, վորովհետև միևնույն է, նրանք իրենց ծնողներին չեն գտնելու և պիտի վոչնչանան: Ավելի լավ է, պահեցեք ձեզ մոտ և ինքներդ խնամեցեք: Նախ և առաջ նրանց տեղավորեցեք մի լայնարձակ վանդակի կամ

արկղի մեջ, տակը փափուկ բամբակ կամ թաղիք փռեցեք, բայց շուտ շուտ փոխեցեք: Նրանց կերակրելու համար ձարեցեք մրջյունի ձվիկներ, բայց ձեր տանն ավելի լավ կերակուր կա—հացի փշրանքներ: Հացի մի փոքրիկ կտոր թրջեցեք կաթի մեջ և իսկույն նրանով կերակրեցեք թռչունի ձագերին, իսկ ավելցուկը չպահեք, այլ տվեք ուրիշ թռչունների, վորովհետև այդ կերակուրը շուտ է թթվում և նրանից կարող են թռչունները վնասվել և մեռնել: Պետք է ձագերին քիչ-քիչ, բայց հաճախ կերակրեք, վորովհետև նրանք չեն կարողանում մեկ անգամից շատ ուտել: Յերբ նրանք մեծանան, կերակրի մի մասը կարող ենք ուղղակի վանդակի հատակին դնել, նրանք կհասկանան բանն ինչուս և, իսկ մի քանի որից հետո իրենք կսկսեն կրացահարել. հետո արդեն կարելի չէ կերակուրը պնակով դնել, որական մի քանի անգամ:

Թռչունների ուսումնասիրությունն ավելի հաջող կլինի, յեթե այդ աշխատանքը մեռակ չկատարեք, այլ մի քանի ընկերներով և գործին լուրջ վերաբերվեք: Վորպեսզի կատարած դիտողությունները չմոռացվեն, գրի առեք ձեր որագրում ամեն դիտողություն, նրա որն ու ժամը: Նշանակեցեք որ-որին և ամեն ամիս, այն ժամանակ դուք հետևյալ տարիներում ավելի հաջողութեամբ կը կատարեք ձեր դիտողությունները:

Թե ի՞նչպիսի դիտողություններ կարելի չէ անել թռչունների վրա գարնան սկզբին:

1. Պետք է ճիշտ կերպով նշանակեք ձեզ ծանոթ թռչունների յերևալու ժամանակը:

2. Պետք է նշանակեք, թե նրանք վերադառնալուց հետո ի՞նչ են անում. նրանց գույնը, վարքը, կերակուրը, վորևե բանով չեն տարբերվում անցյալ աշնան չեղածից: Արուի և եգի գույները միատեսակ են:

3. Նշանակեցեք, թե վոր թռչունն ի՞նչպես է յեր-



գում, յէրբ ե սկսում յերգել, վո՞ր ամսում, որվա վո՞ր ժամանակին և ի՞նչպես են պահում իրենց, մենակ են յերգում թե խմբերով. չէ՞ք նկատում արդյոք նրանց մեջ մըրցում, խաղ, պար կամ վեճ:

4. Յէրբ են սկսում բուն հյուսել, վո՞րտեղ և ի՞նչ նյութից, ինչո՞վ են պատում ներսը, ի՞նչ ձև ունի բունը, ի՞նչ գույն ունի նրանց ձվերի կեղևը: Բացատրեցե՞ք գույնի նշանակութունը:

5. Բների վրա դիտողութուններ կատարելիս, տեսե՞ք թե հասակավորների կողմից ի՞նչ վերաբերմունք ե նկատվում. նրանք չէ՞ն աշխատում արդյոք բունն անվտանգ դարձնել:

6. Տեսե՞ք, թե արուն մասնակցո՞ւմ ե բուն շինելու աշխատանքներին, թուխս նստելու, ճուտերին կերակրելու գործին, թե միայն եգն ե այդ ամենն անում: Աշխատեցե՞ք ձիշտ կերպով վորոշել ձեր դիտած թռչունի տեսակը:

\*  
\* \*

Մայիսը թռչունների բազմացման ժամանակն ե: Բուրն ել զբաղված են բուն շինելու, ձու ածելու և թուխս նստելու հոգսերով:

\*  
\* \*

Շեփորուկի թառամելու և թափվելու ժամանակ թռչունների մեծ մասը զբաղված ե ձագերին դաստիարակելու հոգսերով: Ձագերին կերակրելու ընթացքում նրանք յենթարկվում են փետրափոխության:

Ամառը նրանց կյանքի մեջ նկատվում ե զգալի փոփոխություն: Նրանք իրենց այնպես չեն պահում, ինչպես գարնանը: Նրանցից շատերը, վորոնք բուն շինելու ժամանակ կերակրվում ելին միջատներով, այժմ հատիկակեր

են դառել և ըստ այնմ ել փոխում են իրենց բնակավայրն ու կենցաղը: Շատերը յերամներ են կազմում և թափառում են այս ու այն կողմ հարմար կեր ճարելու համար: Այսպես որինակ, կեռնեխները, ծիծեռնակները, սարչակները, զրախտապանները և արտույտները թռչում են յերամներով:

Ամառվա վերջին շատերն արդեն պատրաստվում են չվելու: Չվելու մոտեցումը հայտնվում ե նրանով, վոր թռչունների յերամները քանի գնում սովաբանում են և նկատելի դառնում:

Սկսվում ե չուն: Թռչունների ճանապարհորդության ողային ուղիները նույնպես շատ զարմանալի յեն: Նրանք բազմաթիվ են և համարյա անփոփոխ: Թռչունների ամեն տեսակն աշխատում ե իր ուղիով գնալ և անհասկանալի չե, թե ինչո՞ւ անպատճառ այդ ընտրած ուղին ե համարվում համապատասխան և նպատակահարմար:

Թռչունների սիրած ճանապարհներն են ծովերի և գետերի ափերը: Յեվրոպայում նրանց ընտրած ամենասովորական ուղիներն են Պեչորայի, Հյուսիսային և Արևմուտյան Իվինաների, Ոսեգայի, Վոլգայի, Դոնի և Դնեպրի հովիտները: Այդ ճանապարհներով ցամաքի թռչունների յերամները գնում են Սև և Կասպից ծովերի ավազանները, իսկ այնտեղից ծովափերով դեպի Արևելյան Պարսկաստան, Փոքր-Ասիա և Յեգիպոս: Աֆրիկայում նրանց սիրած ճանապարհն ե Նեղոս գետի հովիտը. հյուսիսից միլիոնավոր թռչուններ գալիս են այնտեղ. մի ճանապարհ ել գնում ե Նիգերի վրայով: Ասիայի հսկայական գետերի հովիտները նույնպես չվող թռչունների կայաններն են: Սիբիրի Ոբ, Յենեսեյ և Լենա գետերի հովիտներով, հազարավոր կիլոմետրեր կարելով անցնում են դեպի հարավարևմուտք և այնտեղից դեպի Աֆրիկա:

Նետաքրքիրն այն ե, վոր ամենափոքրիկ թռչուններն,



ինչպես որինակ՝ ծայր-հյուսիսում ապրող կսցարիկները ձմեռում են ամենից հեռու, Աֆրիկայի ամենահարավային ծայրում:

Ամենից վաղ թռչում են, ի հարկե, միջատակերները, ամենից ուշ՝ հատիկակերները և ջրային թռչունները: Գիշատիչ թռչունները հետևում են իրենց փետրավոր վորսին:

Շատ վաղ հեռանում են մաքալուկներն ու ծիծեռնակները, իսկ բոլորից ուշ զանազան ջրային կենդանիները, վորոնց կարելի չե տեսնել ճահիճների, գետերի և լճերի ափերում: Նրանց գիտելու համար մեծ վարժություն և հաստատակամություն է պետք: Պետք է վարժվել աշնան ցրտերին և վատ չեղանակներին: Յեվ առհասարակ չպետք է վախենալ աշնան խոնավություններից և հյուսիսային քամիներից: Նա՛ ով վարժվել է այդպիսի ծանր եքսկուրսիաների, նա մեծ բավականություն և բազմատեսակ հետաքրքրական բաներ տեսնելու հաճույքին կարժանանա:

\*  
\*\*

Վորջան խոր աշուն, այնքան ձմռան նշաններն յերեվում են: Արևի ջերմությունն ու լույսը պակասում է: ցերեկը կարճանում է և գիշերը չերկարում, իսկ չերկինքը ծածկվում է մշտական ամպերով: Աշնան ամիսների մեջ նույնիմբերն ամենամուսյլ ամիսն է:

Նույնիմբերին շարունակվում է ուշ մնացած թռչունների շուն: Շատ ջրային թռչուններ չետ են մնացել: Ի՞նչ խոսք, վոր հանկարծակի վրա հասնող սաստիկ ցրտերն ու սառնամանիքները նրանց պիտի զրկեն ջրից և նրանց չեբամներն անհամար փորձանքների չենթարկվեն:

\*  
\*\*

Յեկավ ձմեռը: Ամեն ինչ ծածկված է սպիտակ ձյունի հաստ վերմակի տակ, ամեն կողմ փայլում են ձյան



Նկ. 26. Սածկտիկ

են զանազան սերմերով. այդ այն չերաշտահավերն են, վոր ամառվա ընթացքում բուսական կերակուր բերաններըն առած չկան: Ասենք, հիմա չեյ մեծ ախորժակով վորեկե միջատի ձվիկներ կամ հարսնյակներ կխժռելին, չեթե նրանց ձեռքն ընկներ:

Հաճախ սովորական չերաշտահավերի կողքին չերևում են նույն ճնճողիկների ցեղին պատկանող մի քանի ուրիշ թռչուններ, սպիտակափոր և յերկար պոչերով ապպոլուններ, աբայիկներ, սիսեղներ, գեղեցիկ նայե, մանրիկ յեղևնուկներ, ծուլլ յաչկուցներ և յեղևակներ:

Իսկ գիշատիչներից մեզ մոտ ձմեռում են բուն, բուեծը, արծիվը, բազենների տեսակները: Մշտական ձմեռողներից են փայտփորները—սև ծառուտիկը, սպիտակամեջք և հազվագյուտ կանաչ փայտփորը և այլն: Չմեռում են նաև դաշտային և տնային ննդուկները, նայակները, նա-

փափուկ հյուսքերը: Ահա, այդ ժամանակ է, վոր դուք պետք է դուրս գաք եքսկուրսիայի զեպի բնություն: Մի խաղաղ ձյունոտ որդուրս չեկեր անտառ: Սաղաղություն մեջ ձեր ալանջին կհասնեն քնքույր ձայներ: Ի՞նչ է կատարվում այնտեղ: Յերաշտահավեր են, վորոնք հավաքվել են ծառերի վրա և կերակրվում



յերը, ազուավները և գող կաշաղակը, փորոնք մնում են բնակարաններին և այգիներին մտտիկ: Դաշտերում և անտառների չեղբերին յերևում են փոքրիկ թռչունների և կաքավների հետքեր:

Զբոսանքի ժամանակ այնքան ել հեշտ չե այս բուրին նկատելը: Սակայն անտառային թռչուններին զրավելու մի միջոց կա, այդ միջոցը նրանց ազատ կերակրելն է: Պետք է կերամանը դնել մի հարմար տեղ: Զպետք է մի տեսակ կերակրով կերակրել: Ամենից լավն աչն կլինի, յեթե զանազան կերերից խառնուրդ կազմեք (սերմեր, պտուղներ, հացի փշրանք և այլն), փոք միշտ ավելի ոգտակար և առողջարար է թռչունների համար: Յեթե դուք թռչուններին այդպես միշտ կերակրեք, նրանք ձեզ կսովորեն և իրենք կզան կերամանի մոտ և ձեզանից չեն վախենա: Իսկ թռչունների վարքն ու սովորույթներն ուսումնասիրելով դուք այնքան բան կսովորեք, փոքրան վոչ մի դիրք ձեզ չի կարող սովորեցնել:

Թռչունների կյանքի վրա կատարած զիտոլոգիայի ցաները վոչ միայն պետք է գրի առնել, այլ և նկարել, զրծագրել, թեկուզ պրիմիտիվ և սխեմատիկ ձևով: Ճշմարիտ է, կա մի ավելի կատարյալ, բայց վոչ բոլորի համար մատչելի մի միջոց, վորով միայն հասակավորները կարող են ոգտվել, դա լուսանկարելն է:

Վայրի կենդանիներին և թռչուններին լուսանկարելը բնական պայմաններում, ելուցյաժ միևնունն է, ինչ վոր վորսորդությամբ պարապելը, միայն առանց արյունհեղության, դա մի ուսանելի և հրապուրիչ սպորտ է:

Լուսանկարած նկարները լրիվ ու պարզ տպավորությունների մի հիշատակարան են, վորտեղ մարդը հավաքում է իր բնության մեջ ունեցած ապրումները: Մի բանի ժամանակից հետո կարելի չէ ունենալ բազմաթիվ նրկարներ տեղական թռչունների, այդ նկարները շատ հե-

տաքըքրական և արժեքավոր են, վորովհետև լուսանկարի ճշտությունն ու մանրամասների բնականությունը վոչ մի ուրիշ նկարի հետ չի կարող համեմատվել:

Առանց դժվարության կարելի յե լուսանկարել թռչունների բները, իրենց ձվերով, թուխս նստած թշշունի հետ և ձուտերով: Յեթե ցանկություն լինի, կարելի յե մի թռչունի բնապատմությունը տալ լուսանկարներով:

Լուսանկարչության համար բնությունը շատ հարուստ նյութ է տալիս ամբողջ տարին, իսկ առանձնապես—գարնանը:



ԹՈՒՉՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ԸՆԳՅԱՆՈՒՐ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ

Դպրոցում կամ պիոներական կոլլեկտիվում չեղած կարճ ժամանակամիջոցում յերեխաները չեն կարող փոքր ի շատե մոտիկից ծանոթանալ թուշուհներին բազմաքանակ և բազմապիսի խմբի հետ: Ուսումնասիրել ևս բոլորովին հընարավոր չէ: Մինչդեռ, թուշուհների կյանքի և սովորույթների հետ հիմնավորապես ծանոթ լինելն անհրաժեշտ է, վորովհետև թուշուհների գյուղատնտեսական նշանակութան մասին գործնական լեզրակացութուններ \*) հանել կարելի լե միայն ինքնուրույն կերպով ձեռք բերած տրվյալների հիման վրա: Դեպի թուշուհներն չեղած հետաքրքրութունը և նրանց պաշտպանելու ցանկութունը հաճախ այն դեպքում է առաջ գալիս, չերբ նրանցից թեկուզ մի քանիսի հետ մոտիկից ծանոթանում են: Պարզ է, վոր տվյալ ժամանակամիջոցում (որինակ՝ գարնանամառային սեզոնում) մանրամասն ուսումնասիրելու համար տեղական բազմաթիվ թուշուհներից պետք է ընտրել միայն մի քանի ներկայացուցիչ՝ գուցե նույնիսկ մեկ գույզ (մեկ ընտանիք): Բայց յեթե մանկական կոլլեկտիվի անդամները դիտողության համար տարբեր թուշուհներ ընտրեն, ապա հենց առաջին տարին վոչ միայն վորակի ալ և քանակի տեսակետից մեծ հետևանքներ կստացվեն:

Անուհետև՝ անհրաժեշտ է ոգնութուն ցույց տալ սկսնակ դիտողին իր ընտրած թուշուհն ուսումնասիրելիս:

\*) Նույն թուշուհները տարբեր տեղերում է գանազան յեզանակներին չերբեմն ոգտակար և յերբեմն ել վնասակար են լինում: Տես նախորդ գլուխները: (Փասոք. քարգմ.)

Ժամանակակից դպրոցը մեծ տեղ է տալիս գրավոր ծրագիրներին, հարցացուցակներին: Այդ ծրագրերի մեջ ընդհանուր գծերով նշում են, թե ինչի վրա պետք է ուշ դարձնել՝ առանց նոր գիտելիքներ հաղորդելու կամ յեզրակացութուններ հանելու: Ծրագիրը մշակելիս ինքը՝ դիտողը պետք է ինքնուրույն կերպով գիտելիքներ ձեռք բերի և յեզրակացութուններ անի: Դիտողութունների հետևանքները բանավոր կամ գրավոր կերպով պիտի գեկուցել և քննության յենթարկել պիոներական հավաքույթում:

Պարզելու համար այս՝ բերենք դիտողութունների ծրագրի մի որինակ ամենատարածական թուշուհներից մեկի՝ ծիծեռնակի վրա:

1. Գարնանը, ծիծեռնակների գալուց առաջ, հետազոտեք ձեր թաղը կամ գյուղը և նշեք այն տները, ուր ծիծեռնակի բներ կան: Նշեք թե ինչ վիճակում են նրանք՝ անվնաս, կիսաքանդ, քանդված:

2. Նշեք այն որը, չերբ առաջին անգամ ծիծեռնակ տեսաք: Ի՞նչպես եր ընթանում ծիծեռնակների վերադարձը: Վերադարձից հետո փորձեք մոտավորապես հաշվել թե քանի ծիծեռնակ է բուն գրել ձեր թաղում կամ գյուղում:

Ստուգեք «մի ծիծեռնակով գարուն չի գա» առածը: Ստանձանիք չեղով արդյոք առաջին ծիծեռնակի յերևույց հետո:

Ստուգեք իսկապես հերկը սկսում են ծիծեռնակի գալուց հետո: Գյուղացիներին հարցրեք, թե ինչու յեն նրանք այդպես անում:

3. Մանրամասն նկարագրեք ծիծեռնակի կազմութունը և գույնը: Համեմատեք բաղաբի և գլուղի\*) ծի-

\*) Քաղաքի ծիծեռնակի գլուխը և մեջքը կապտավուն սե գույնի յե, կուրծքը սպիտակ. բունը շինում է սովորաբար քարաշեն պատերի վրա: Գյուղի ծիծեռնակի փորը շեկ է, ճակատը և վիզը՝ մուգ-շեկ. բուն է շինում շենքերի գերանների վրա:



ծեռնակները արտաքինը: Ինչո՞վ է քաղաքի ծիծեռնակը տարբերվում մաքալուղից (մանգաղաթևից):

4. Դիտե՞ք ծիծեռնակի թռչչքը (ուղղութիւնը, շարժումները): Ինչպիսի ձայն է հանում նա:

5. Ի՞նչպես են ծիծեռնակներն անցկացնում իրենց որը: Յէ՞րբ և վո՞րտեղ են հանգստանում: Գտե՞ք նրանց գիշերելու տեղը: Յէ՞րբ են նրանք քնում: Յէ՞րբ են գարթնում:

6. Ծիծեռնակներն իրենց ի՞նչպես են պահում զանազան լեղանակներից առաջ: Կարելի՞ յետ արդյոք ծիծեռնակի թռչչքից գուշակել լեղանակը:

7. Ի՞նչպես են վառվում ծիծեռնակները միմյանց հետ:

8. Ի՞նչով են սնվում ծիծեռնակները: Ի՞նչպես են վորսը բռնում: Վո՞րտեղ և ի՞նչպես են շուր խմում: Ի՞նչպես են իրենց պահում արոտատեղիներում, ուր արածում է տավարը: Ի՞նչպես բացատրել այդ:

Ծիծեռնակի սնվելու վրա կատարած ձեր դիտողութիւններից լեզրակացրե՞ք նրանց ոգտակարութեան և վրնասակարութեան չափը:

9. Հետևե՞ք, թե գալուց հետո ծիծեռնակը յերբ է սկսում բռն շինել: Ի՞նչպիսի տեղ է ընտրում բնի համար (մանրամասն նկարագրեցե՞ք):

Հետևե՞ք, թե ծիծեռնակի գույգն ի՞նչպես է բռն կառուցում: Վո՞րտեղից է վերցնում շինանյութը: Ի՞նչպես են իրենք կախվում կառուցման տեղին:

Կառուցվող բնի տակ գետնի վրա տախտակ դրե՞ք կամ լրագրի թուղթ փռե՞ք և թափվող շինանյութը հավաքե՞ք ու վորոշե՞ք:

Դիտե՞ք, թե վորոշ ժամանակամիջոցում՝ 15 կամ 30 րոպեյում քանի՞ անգամ է ծիծեռնակը շինանյութ բերում: Վո՞րքան ժամանակ է տևում կառուցումը:

Ծիծեռնակներն արդյոք միշտ էլ վերջացնում են բնի

կառուցումը: Յեթե կիսատ են թողնում, պարզե՞ք թե ինչո՞ւ:

10. Բռնը կառուցելուց անմիջապես հետո յետ սրկսում եղը ձու ածել: Քանի՞ ձու յետ ածում նա և վորքան ժամանակում:

Ի՞նչպես են նրանք թուխս նստում: Արուն և եգն արդյոք հաջորդում են իրար:

Վորքան ժամանակ են թուխս նստում:

Ձու ածելուց քանի՞ որ հետո յետ դուրս գալիս ձագերը: Ի՞նչպիսի տեսք ունեն նոր դուրս լեկած ձագերը:

11. Ի՞նչպես են կերակրում ձագերին: Որվա վոր ժամերին են նրանց հատկապես առատ կերակրում: Հաշվե՞ք՝ թե 15 կամ 30 րոպեյում մի գույգ ծիծեռնակներ քանի՞ անգամ են կեր բերում դեպի բռնը:

12. Փորձե՞ք վախեցնել ձագերին՝ պատը կամ գերանը թխկացնելով: Ի՞նչպես են իրենց պահում ձագերն այս դեպքում: Ի՞նչ նշանակութիւն ունի այդ:

13. Յէ՞րբ են ձագերը բնից դուրս թռչում: Ինչո՞վ են տարբերվում նրանք մեծերից:

Ի՞նչպես են նրանք թռչել սովորում:

Ի՞նչպես են կերակրվում առաջին թռչչքից հետո:

14. Ծիծեռնակն արդյոք յերկրորդ անգամ ձու ածում և ձագ հանում է:

15. Վորտեղ են հավաքվում ծիծեռնակներն աշնանը չվելու համար:

Նշանակե՞ք նրանց չվելու որը:

16. Վորքան ժամանակ մնացին ձեզ մոտ ծիծեռնակներն այս տարի:

17. Նորից հետազոտե՞ք ձեր թաղի կամ գուղի ծիծեռնակների բները: Այս տարվա ծիծեռնակների թիվը համեմատե՞ք անցյալ տարվանի հետ:

18. Ուսման տարվա սկզբին հաշվետվութիւն կազ-



մեք (բանավոր կամ զրավոր) կցելով նաև համապատասխան նկարներ:

### ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ԱՅԳԻՆԵՐԸ ԹՌՉՈՒՆՆԵՐԻՅ

Թուշուներին շատերը թեև բազմաթիվ ոգուտներ են տալիս մարդկանց, բայց չերբեմն ել՝ ամառվա վերջերին նրանցից մի բանիսը զգալի վնաս են հասցնում այգիներին՝ ուտելով և վոչնչացնելով բալը, սալորը, խնձորը և տանձը:

Ի հարկե, այդ ժամանակ յուրաքանչյուր տնտես պետք է պայքարի թուշուների դեմ, բայց վոչ թե պիտի սպանի նրանց, այլ այս կամ այն միջոցով այգուց բշի:

Ճնճղուկը կարող է բավական վնաս հասցնել բալի ծառերին՝ կտրելով ամենալավ պտուղները: Մյուս թուշուներից բալի ծառերին վնասում են ժեռը, պիրոլը, կեռնեխը և մանր միջատակերները: Բայց այդ միևնույն թուշուակները միանգամայն ծածկում են այդ վնասը՝ տարվա այլ յեղանակներին վնասատու միջատներ վոչնչացնելով (ըստ Վալիսի դիտողութույնների):

Թուշուները հատապտուղ ուտում են գլխավորապես ծարավը հագեցնելու համար: Իզուր չէ, վոր անգլիացի այգեպաններն ասում են, թե «վորքան ամառը շոգ է, այնքան թուշուները շատ են վնասում այգուն» և խորհուրդ են տալիս ջրով լի ամաններ դնել կամ կատուններից պաշտպանված տեղերում թուշուներին հարմար փոքր ավազաններ կառուցել: Իսկ ամերիկացի այգեպանները նկատել են, վոր ամառը մանր թուշուները մեծ հաճույքով ուտում են վայրի բույսերի պտուղները և անուշադիր են թողնում դրանց հետ միաժամանակ հասնող մշակովի պտուղները: Այդ պատճառով ել յելակը, կեռասը և բալը թուշուներից պաշտպանելու համար ամերիկացիները թըթենի յեն տնկում, խնձորն ու տանձը պաշտպանելու հա-

մար՝ սզնի. խաղողը պաշտպանելու համար՝ թանթրվենի, վայրի խաղողը և թխենի:

Պաշտպանութւան մեխանիկական միջոցներից հիշենք հետևյալը: Ռուսաստանում՝ Վլադիմիրսկի նահանգում բալի այգիներում յերբեմն ծառերի միջով իրար հետ միացած յերկար պարաններ են ձգում, վորոնց վրա բազմաթիվ զանգակներ և բոժոժներ են կապված: Ժամանակ առ ժամանակ պարանը ձգում են. զանգակներն ուժեղ աղմուկ են հանում և փետրավոր խժռողներին վախեցնում:

Նման ձև գործ են ածում նաև Հայաստանում. զանգեր են կախում, կոչնակներ շինում և դրանց աղմուկով թուշուներին այգուց փախցնում:

### ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲՆԵՐ

ԽՍՀՄ-ում առաջժմս միայն ժեռերի համար են բներ պատրաստում, բայց այդպիսի բներ կարելի յե սարքել և այլ թուշուների համար, վորոնք հաճույքով կբնակվեն և ձագեր կհանեն նրանց մեջ:

Բուն պատրաստելը դժվար չէ: Պետք է տանիքավոր արեղ պատրաստել չոանդած և ուղիղ սղոցած տախտակներից: Տախտակը պետք է լինի ամուր, չոր՝ և հոտ չունենա: Բնի համար հարմար է լորենու, բարդու, մայրու կամ յեղենու փայտը: Արհեստական բնի խորութունը կես մետրից (11 վերշոկ) պակաս չպետք է լինի, վոր կատուններից պաշտպանելու համար է:


Առջևի պատի վրա վերևի մասում շրջանաձև կամ կիսաշրջանաձև անցք են բացում: Անցքի տակ մի ձողիկ են ամրացնում, այնպես վոր այն հասնի յետևի պատին: Բացի այդ՝ դարձյալ անցքի տակներսի կողմից տախտակի մի փոքր կտոր են ամրացնում, վորը կատուններին խանգարում է ձագերը ճանկել:

Տանիքը բնից ավելի լայն և դեպի յետ կամ կողմ



պետք է լինի թերված, վոր անձրևն անցքից ներս չթափվի: Ամբողջ արկղը՝ հատակն ել հետը պետք է ներկել շուտ չորացող մուգ գույնի ներկով:

Բնի մեջտեղը հատակի վրա պետք է փետուրներ, դարման, ճիւղբ, փայտի թեփ ածել:



Նկ. 27. Կատուներից պաշտպանված բունը.

Արհեստական բները մեխում կամ ամուր պարանով կապում են ձողերին, պատերին, ծառերի բներին և ճյուղերին, վորքան կարելի յե պինդ, վորպեսզի վոչ ազոավը և վոչ ել կատուն չկարողանան շարժել: Ավելի լավ է կապելու համար այրած և չուղած յերկաթաթել գործածել: Անցքը պետք է միշտ ել դարձած լինի դեպի հարավ կամ արևմուտք:

Կատուներից և այլ մանր գիշատիչներից պաշտպանելու համար արկղը պետք է տակից վորքան կարելի յե խիտ պատել փշոտ ճյուղերով:

Դ. Կայգորդովն ասում է, վոր այս պահանջներին չբավարարող արհեստական բներում ժեռերը բուն չեն դնում:

Բները մաքրել հարկավոր չէ, այդ մասին կհոգան իրենք թռչունները: Բայց արժե ամեն տարի փետրվարին առանց իջեցնելու ստուգել: Յեթե վորևէ բան պակաս է, ուղղել, չուրաքանչյուր բնի մեջ մի փոքր թարմ փետուր և բնի կառուցման համար այլ նյութեր ածել:

Առաջին անգամին լավ է բներն աշնանից կախել, վորպեսզի ձմեռվա ընթացքում թռչունները չերկար ժամանակ տեսնեն և վարժվեն նրանց:

### ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ՓՉԱԿՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ԹՌՉՈՒՆՆԵՐԻՆ

Համաձայն անտառավարության կանոններին շատ տեղերում կտրատում են բոլոր հին ծառերը՝ առանց ուշք դարձնելու, վոր նրանց վրա չեղած փշակները մեր հավատարիմ բարեկամների պաշտպանվելու և բնակալելու տեղերն են: Այդ կանոնների կիրառման ժամանակից սկսած բուն գտնելը թռչունների համար դժվարացել է, վորովհետև բնական փշակները պակասել են:

Գերմանիայում մարդիկ ընդառաջ գնացին թռչուններին, բայց վոչ հաջող կերպով: Նրանք սկսեցին, վորպես բուն, գանազան ձևի արկղներ գործածել: Այդ արկղները բնությանն ամենևին հարմարեցված չեյին, ուստի թռչուններն այնքան ել հաճույքով չեյին բնակվում նրանց մեջ:

Այս բանը նկատեց թռչունների սիրահար Բերլեպլը: Նա դեռ 15 տարեկան հասակում իր որագրի մեջ գրում էր՝ թե գործի հաջողության համար այդ արկղները պետք է կառուցել բնականի նման, այնպես, վոր թռչունները նրանց մեջ բնակվեն ինչպես բնական փշակներում և փոսերում:

Բասն տարուց հետո նա լուծեց այդ խնդիրը: Բազմամյա դիտողություններից հետո նա համոզվեց, վոր թռչունները մեծ հաճույքով զբաղեցնում են փայտփորները լքած կամ ազատ փշակները: Այս հանգամանքի հիման







Արհեստական փշակների տանիքը և կախելու փայտը 75 միլլիմետր հաստության կաղնու տախտակից են պատրաստում: Ինչպես նկարից յերևում է, տանիքը և կախելու փայտը փշակին ամրացվում են պտուտակներով: Կախելու փայտը ծայրերին ունի յերկու անցք պտուտակների համար, վորոնք չճեղքվելու համար թիթեղյա շրջանակներ ունեն: Փշակը հարմար կախելու համար վերին անցքին դեպի վեր կտրվածք կա: Փշակի՝ փայտին ամրացած կողմի վերին ծայրը թեք կտրված է, վոր շուրը փշակի մեջ չթափվի և փայտի վրայով ցած հոսի:

Անցքը կողքին կամ առջևն է:

Փայտփորների բների ձևով պատրաստած Բերլեպլի տարբեր մեծության արհեստական փշակները հարմար են՝

A-փշակը՝ յերաշտահավերի, սիտեղի, ճանճորսի, կարմրատանի և փոքր խայտաբղետ փայտփորի համար.

A<sub>1</sub> փշակը՝ դարձյալ յերաշտահավերի համար.

B-փշակը՝ ժեռերի, մեծ խայտաբղետ փայտփորի, սիտեղի, ճանճորսի, այգու կարմրատուտնի, մեծ յերաշտահավի համար.

C-փշակը՝ կանաչ փայտփորի համար.

D-փշակը՝ հողմավարի, ճայակների, բուերի համար:



Նկ. 29. Փշակ մաքալուկի համար.



Նկ. 30 Փշակ խաղատոնիկի, ճանճորսի, և կարմրատուտի համար.

Կիսաշրջանաձև անցքով և C-ի ներքին կազմվածքով փշակը (տես նկարը) կախում են մաքալուկների համար:

ԻՆՉՊԵՍ ԿՍԽԵԼ ՓՉԱԿՆԵՐԸ

Յեթե փշակները կանոնավոր են շինված, ապա, գործի հաջողութունը կախված է միայն ճիշտ կախելուց: Անհրաժեշտ է մի քանի ցուցմունքներ տալ փշակներ կախելու վերաբերմամբ: Բնական փշակների մեջ գտնվող թեփի փոխարեն արհեստական փշակների մեջ ածեք թեփի և հողի հավասար քանակների խառնուրդ: Այս դեպքում չի կարելի «վորչափ շատ, այնքան լավ» կանոնին հետևել: Յեթե այդ խառնուրդից չափազանց շատ ածեք, ապա փշակի ձվաձև փոսիկը կը կորցնի իր արժեքն այն թուշունների համար, վորոնք բնի համար քիչ նյութ են հավաքում կամ բոլորովին չեն հավաքում: Փոսիկը հենց նրա համար է, վոր բուն չհյուսող թուշունների ձվերն իրար մոտ մնան: A փշակում պետք է մոտավորապես մեկ հացի գդալ խառնուրդ ածել, A<sub>1</sub>-ում՝ յերկու գդալ, իսկ B, C, D փշակներում՝ թեչի բաժակովը մեկ: Բայց առհասարակ ավելի լավ է քիչ ածել քան շատ:

Փշակ կախելու ամենալավ ժամանակն ուշ աշունն է, աշնանն են կախում վորպեսզի մեզ մոտ ձմեռող թուշնակները նրանց մեջ ապաստանեն:

Ամբողջ ձմեռվա ընթացքում՝ մինչև մարտը կտրելի չե փշակ կախել և հաջողության մեջ հավատացած լինել: Բայց մարտից հետո թուշունները հաղվագյուտ դեպքում են նույն տարին և չեթ բնակվում նոր կախած փշակների մեջ:

A և A<sub>1</sub> փշակները պետք է կախել պտղատու այգիներում, անտառներում և պաշտպանված տեղերում ծառից, ցողից, պտփից և այլ առարկաներից՝ գետնից 2 1/2—5 մետր բարձրության վրա: Վերևից այդ բները պետք է ճյուղերով ծածկել: Փշակներ կախելը կարևոր է հատկապես դալար ծառատանում, վորպեսզի այնտեղ ոգտակար թուշունների բնակատեղի կազմվի: Յերկու և կես մետրի



վրա կախած փշակներում բնակվում են յերաշտահավերժը: Փշակն այդքան ցածր կարելի չե կախել միայն այնպիսի տեղերում, ուր ոձեր չկան: Անտառներում և մանավանդ փշատերև անտառներում լավ ե փշակները նախ անտառի յեզրերում կախել և ապա աստիճանաբար խորքը գնալ: Բացուսները հատկապես հարմար են փշակներ կախելու համար, վորովհետև թռչունները մութ տեղերից խուսափում են:

**В** փշակը պետք ե  $5 - 5\frac{1}{2}$  մետր բարձրության վրա կախել ծառերից կամ պատերից: Նրանց մեջ սովորաբար ժեռերն են բնակութուն հաստատում, իսկ անտառներում և այգիներում՝ մեծ խայտաբղետ փայտփորը և այլ թռչուններ: Յեթե այդ փշակները ժեռերի համար են դրվում, ապա պետք ե մի բանի հատը նույն ծառի վրա մի շարքի տեղավորել:

**С** փշակը պետք ե կախել արոտատեղիներում և ճահճոտ տեղերում, այգիներում և անտառներում գետնից  $2\frac{1}{2} - 20$  մետրի վրա: Նրա մեջ բնակութուն ե հաստատում կանաչ փայտփորը:

**Д** փշակը պետք ե ամրացնել պուրակներում և անտառներում, բարձր ծառերի վրա՝ հողմավարների, ճաչակների և բազենների համար:

Մաքալուկների համար փշակը պետք ե կիսով չափ լցնել նուրբ նյութով (բուն սարքելու համար, որինակ, ճնճղուկների լքած բների մանր փեռերիկներով) և ամրացնել բարձր շենքերի կատարին:

Բաց փշակը կարելի չե կախել անշատ կանգնած ծառերից և սնների պատերից  $2\frac{1}{2} - 5$  մետր բարձրության վրա խայտաբղետ ճանճորսի համար:

Վորպես ընդհանուր կանոն փշակները պետք ե կախել մեկը մյուսից 30 քայլից վոչ-մոտ և չուրաքանչյուր ծառից միայն մեկը: Մի հեկտարի վրա ութ փշակը պետք

ե նվազագույն բանակը համարել: Անտառի անկյուններում և լուսավոր մասերում կարելի չե ավելի շատ փշակ կախել, իսկ մութ և խիտ տեղերում՝ պակաս:

Փշակը կարելի չե կանոնավոր տեղավորված համարել, յեթե ուղղաձիգ ե կախված, անցքի կողմը մի փոքր առաջ ե թեքված և անցքն ուղղված ե դեպի արևելք կամ հարավ-արեվելք:

Փշակը վատ ե կախված, յեթե անցքի հակառակ կողմն ե թեքված կամ անցքը բամու կողմ ե դարձած: Անձրևը հեշտությամբ թափվում ե այդ փշակի մեջ: Մի փոքր աջ կամ ձախ թեքված լինելը նշանակութուն չունի:

Փշակը պետք ե կախել այնպես, վոր շարորվի, հակառակ դեպքում թռչուններն այնտեղ չեն բնակվի: Այդ պատճառով ել փշակը պետք և խոշոր պտուտակներով ամրացնել:

Ամեն անգամ, յերբ փշակում մեռած թռչուն, միջատ և կամ թռչունների համար վորևե տհաճ բան կա, անհրաժեշտ ե հեռացնել:

Յեթե փշակում չղլիկ ե բնակվել, նրան չպետք և անհանգստացնել: Չղլիկները թռչուններից պակաս ոգտակար չեն: Այս դեպքում կարելի չե միայն մոտը նոր փշակ կախել:

Առհասարակ թռչունները հաճույքով են բնակվում Բերլեպշի փշակներում: Գերմանիայի Վիլմերսդորֆ քաղաքում (Բերլինի մոտ) հինգ տարի շարունակ փորձում ելին զանազան արկղներ դնել թռչունների համար և միշտ ել զանազան արկղներ դնել թռչունների համար և միշտ ել անհաջող: Բաց յերբ Բերլեպշի փշակներ դրին, թռչունները հենց առաջին տարին բոլորի մեջ ել բուն դրին:

Ամերիկայում վորպես բուն հին կողովներ, պահածոների թիթեղյա ամաններ, նավթի ծակ բխոններ, գոգրաներ (շաձև դոմբներ) են գործածում: Գորշ ճանճորսները և կարմրատուտները հաճույքով



բնակվում են ծաղկամանների մեջ (16 սանտիմետր տրամագծով), վոր կախում են հորիզոնական գիրքով (հատակի վերին մասը, ինչպես յերևում է նկարից, կտարած է):


«Յեթե ցանկալի լի, վոր տվյալ տեղում շատ ժեռեր բնակվեն, պետք է բազմաթիվ առանձին արկղիների փոխարեն «ընտանեկան արկղ-բներ» շինել: Դրա համար պետք է տանիքի տակ մի արկղ ամրացնել մի բանի վանդակով-բներն իրարից բաժանելու կարիք չկա» (Կալգորոդով):

«Շատ քար յեղած դեպքում կարելի լի ճեղքեր և փոսեր ունեցող վոչ-հաստ պատեր շարել կամ քարերն աջնպես կիտել, վոր վորջան կարելի լի շատ ճեղքեր և խորշեր ստացվեն: Այդպիսի խորշերում շուտով բուն կը դնեն սպիտակատուրը, սերինոսները, հոպոպները: Այն տեղերում, ուր խիստ թեք և կավե պատերով ձորեր կան, կարելի լի 15—30 սանտիմետր խորությամբ և 5—8 1/2 սանտիմետր անցքով բներ փորել պատի մեջ: Այդպիսի փոսիկներում կսկսեն բնակվել ժեռերը, ճայակները, ներկարարները, մեղվաբազնները և ջրափնյա ծիծեռնակները» (Բրաուներ):

Բուն դնելու տեղերը շատացնելու համար մեծ հաշուգուլթյամբ կարելի լի կախել յերկաթալարերով հյուսած պաշտպանողական գուլնի կողովներ, իրար կապել թփերի հյուսած ճյուղերը, համապատասխան ձևով խուզել ծառերը և թփերն այնպես, վոր վորջան կարելի լի բուն սարքելու տեղեր շատ ստացվեն:

Թեև վերևում բերված արհեստական բները փոքր ի շատե հարմար են թռչունների բնակվելու համար, բայց նրանց մեջ տեղի ունեցող կյանքը ծածկված է դիտողի հայացքից, վորովհետև թռչունները վախում են մարդկանցից և մոտ չեն թողնում: Ցանկալի լի բնի ներսում տեղի ունեցող կյանքի վրա դիտողութունները կատարել այնպես, վոր թռչունները չանհանգստանան: Այդ բանն անե-

լու համար արհեստական բնի մեջ հետևյալ հարմարություններն են սարքում: Արհեստական բնի յետևի պատը հեռացնում են, հատակին թեփ են ածում և ապա կախում են վերնատան կամ առհասարակ վորևե բարձր սենյակի պատուհանի վերին մասում: Կախելիս հետևում են, վոր



Նկ. 32. Տախտակեց և ծաղկամանից շինված ամենահասարակ բնիկ

Նկ. 31. Անպետք իրերից ինված բնիկ

արկղը դրսից ընդհուպ սեղմվի պատուհանի ապակուհու: Այնուհետև բնի յետևը ապակուհու ծխախոտի թուղթ են կպցնում, վորի մեջ 1—2 անցք է բացված վոչ-ավել քան 3/4 սանտիմետր տրամագծով: Աչքը մոտեցնելով անցքին, կարելի լի դիտել, թե ինչ է կատարվում այնտեղ: Իսկ



Թուշուհները վերնատանը կամ սենյակի ներսը չեն տեսնում: Այդպիսի բներում կարելի յե դիտել զուգբերի և ձագերի կյանքի ընթացքն իր բոլոր մանրամասնություններով՝ բուն սարքելու որից մինչև ձագերի թռիչքը: Այդ բներում կարող են բնակվել ժեռը, մեծ յերաշտահավը, ճանձորսը, կարմրատուտը, ճնձղուկը, մաքալուկը:

ԾԱՌԵՐ ՏՆԿԵԼԸ ՎՈՐՊԵՍ ԹՌՉՈՒՆՆԵՐ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԻՉՈՅ

Յեթե բանջարանոցի կամ ցանքսի համար անհարմար հողամասեր կան, ապա կարելի յե այն ծառաստան դարձնել: Հարմար ենրա շուրջը մասրենի տնկել (յերեք շարք), իսկ ներսը՝ սգնի: Հողն աշնանը խոր փորում են և թողնում, վոր ձմեռվա ընթացքում կոշտերը սառեն:

Գարնանը շախմատային կարգով իրարից 90—100 սանտիմետր հեռու տնկում են սգնիները: Մեջները տեղ տեղ թթենի և այլ ծառեր ու թփեր ել են տնկում:

Իսկ յեթե ազատ հող չկա, ապա վերոհիշյալ ծառերն ու թփերը պետք ե տնկել փոքր խմբերով բախում կամ պարտիզում: Ամառը և աշնանը թուշուհները սիրով ուտում են այդ ծառերի ու թփերի հասած հատապտուղները: Թրփերի փշերն ել շատ լավ պաշտպանում են բները կատուններից և այլ գիշատիչներից: Դաշտերում և անտառների յեզրերին բանող փշոտ թփերն ապաստարան են տալիս մի շարք թուշուհների: Պահպանեք այդ թփուհները մանր թրուշուհների համար և անմատչելի դարձրեք այն չորքոտանի և յերկոտանի գիշատիչների համար:

Այդ տեղերի թափված տերեփները յերկար ժամանակ չպետք ե հավաքել: Թուշուհները նրանց տակ կեր են գրտնում, իսկ տերեփների խշխշոցը իմաց ե տալիս թշնամու մոտենալու մասին: Թուշուհները զարմանալի համառությամբ խուսյա են տալիս այն տեղերից, վորտեղից տերեփները հեռացված են:

Յերկաթալարի և փայտի ցանկապատները պետք ե հնար յեղածին չափ փոխարինել կենդանի ցանկապատով, վորն ավելի աժան ե, գեղեցիկ և միևնույն ժամանակ բուն դնելու հարմար տեղեր ե տալիս: Կենդանի ցանկապատը պետք ե խուզել լավ գարնանը կամ աշնանը: Ամառվա կեսին խուզելու դեպքում թուշուհները կզրկվեն յերկրորդ անգամ ձագ հանելու հնարավորությունից:

Ամառը թուշուհներին միք մոռանա. թուշուհները մեր հոգատարության կարիքն ունեն վոչ միայն ձմեռն այլ և ամառը՝ տեղան յերաշտների ժամանակ: Այդ ծանր շրջանը հատկապես ուժեղ անդրադառնում ե միջատակեր թուշուհների վրա: Չոր և փոշոտ ձամբաներում և դաշտերում այդ ժամանակ քիչ վորդ ու միջատ կա, և ձվից նոր դուրս յեկած ձագուկները մնում են քաղցած:

Սուր կարիքի ըուպեններին պետք ե ոգնության գալքաղցած թուշուհներին:

Կերամաններ կախեք պատուհանից կամ այգում ծառերի ճյուղից և վրան ածեք սեղանի փշրանքներն ու սե հացի մանրուք: Իսկույն ամեն կողմից այդ սեղանի վրա կհավաքվեն ճնձղուկները, մոխրագույն կեռնեխը, խաղալանիկը և այլ թուշուհներ: Նրանք վոչ միայն իրենց քաղցը կհագեցնեն, այլ և լի կտուցներով և քուշերով կթուշեն իրենց բները, վորտեղ նրանց սպասում են թուշու ու չր փետրավորված ձագերը:

Կերամանի մոտ պետք ե դնել նաև ամանով շուր, վորից թուշուհները կհագեցնեն ծարավը:

ԳԻՇԱՏԻՉ ԹՌՉՈՒՆՆԵՐ ԳՐԱՎԵԼԸ

Գարնանը և աշնանը տվյալ տեղի վրայով անցնող ոգտակար գիշատիչ թուշուհները գրավելու և տեղում պահելու համար խորհուրդ ե տրվում դաշտերում 3—4 մետրանոց ձողեր տնկել և այդ ձողերի ծայրերին հորիզոնական



դիրքով 35—70 սանտիմետրանոց փայտ ամրացնել: Ավելի լավ է ձողերը անկել հատկապես անտառների չեզրերին: Ձողերը պետք է տնկել գարնանը և աշնան դեմ (ոգոստոսին) արտերի արանքներում կամ լեզրերին: Ցանկալի յե, վոր այդ ձողերն ամբողջ տարին մնան դաշտում և ժամանակ առ ժամանակ նորոգվեն. մեղվաբազենները, մկնաբազենները և հողմավարները սիրում են նստել փայտի վրա, վորտեղից հեշտությամբ դիտում են վորսը՝ գանազան կրծողներ և միջատներ:

Յուրաքանչյուր տնտես, վոր հասկացել է գիշատիչ թռչունների ոգուտը և ցանկանում է իր բերքի վորոշ մասը պահպանել, պետք է գրավի այդ ոգտակար դաշնակիցները դեպի իր դաշտերը:

**ԻՆՉՈՎ ԿԵՐԱԿՐԵԼ ԹՌՉՈՒՆՆԵՐԻՆ ՁՄԵՌԸ.  
ԿԵՐԱՄԱՆՆԵՐ**

Չմեռվա ամենալավ կերը խոզի ճարպն է, վոր կախում են թելի վրա շարած կտորներով. թռչնակները մեծ ախորժակով ուտում են այն:

Թռչունների համար մի այլ հրաշալի կեր այսպես են պատրաստում. տավարի հալած ճարպի հետ խառնում են հացի փշրանք, կանեփ, կորեկ կամ ցորեն և զգալով զգուշորեն ածում են ծառերի ճյուղերի վրա: Ծարպը սառում է թելերի և կաթիլների ձևով և թռչունները կարճ ժամանակում ուտում, վերջացնում են այն:

Յուղաբեր բույսերի սերմերը հիանալի կեր են հատիկակեր թռչունների և յերաշտահավերի համար: Նրանք հատկապես մեծ ախորժակով ուտում են կանեփը, ապա արևածաղկի սերմը, խաշխաշ, կորեկ, վարսակ, քնջութ և այլն:

Վորոշ տեղերում թռչունները նրանք կերակրում են նաև բրնձի, հաճարի և նման հատիկներից պատրաստած

կերակրով (քաշովի): Բացի այդ սերմերից հոտաղ-խարուկներին, խածկաիկներին, սարեկներին, զրախտապաններին, լեկքանիկներին, սերինոսներին պետք է տալ նաև խոտ, տատասկափշի հասած գլուխներ և չորացած հատապտուղներ:

Թրջած հացը և յեփած կարտոֆիլը հեշտ և արագ փրչանում են և ոգուտի փոխարեն վնաս են բերում: Փչացած կերն ուտելով թռչնակները հեշտությամբ հիվանդանում և մեռնում են:

Միայն ճնճղուկներն են, վոր անպատիժ կերպով ամեն կեր խժռում են:

Թռչնասերները պետք է միշտ ել հարժար. առիթից ոգտվեն և վորքան կարելի յե շատ հատապտուղ չորացնեն, վորպեսզի դաժան ձմռանը նրանցով պահպանեն իրենց փետրավոր բարեկամների գոյությունը:

Հասկանալի յե, վոր մարդու տված լրացուցիչ կերի բաժինն ավելորդ չի լինի թռչնակների համար: Ծիշտ է, ձմեռը նրանք կարող են մի բան ճարել և քաղցը հագեցնել, բայց սառնամանիքներին նրանց բանը վատ է լինում: Մեր ամենալավ բարեկամները՝ յերաշտահավերը, արքայիկները և այլ մանր թռչունները չեն կարողանում սը-




Նկ. 33 Հասարակ կերաման

նունդ ճարել և քաղցից մեռնում են: Վորքան ոգուտ կարելի յե բերել մի փոքր սննդապաշար ծախսելով թռչնակներին այդպիսի բոպեններին կերակրելու համար: Վատ չեք լինի նման դեպքերի համար տնային միջոցներով վորևե կերաման պատրաստել:

Ամենապարզ կերամանը մի տախտակ կամ դարակ է (45×70 սանտիմետր), վոր հեշտությամբ կարելի յե ամրացնել կամ կախել այդի նայող պատուհանի առջև:



Շատ հարմար և շարժական «Հեսսենյան կերամանը», վորի տանիքի յեզրի և ավելի ցած գտնվող տախտակի միջև կողքերն ապակեպատ են՝ վերևի սեղանիկը լուսավորելու համար: Կերը դրվում և այդ սեղանիկի վրա: Մի քանի թռչուններ (հոտաղ - խաբուկները, դրախտապանները և այլն) սիրով չեն մտնում տանիքի տակ, ուստի նրանց համար հատիկը թափում են գետնի վրա և քամու կողմից խսիր են ամրացնում:




Նկ. 34. Հեսսենյան կերաման


Մի այլ ձևի կերամանն էլ մի արկղ է, վոր կարելի չէ մեխել ծառի կամ պատի: Արկղի հատակն այնպես և սարքած, վոր մագլցող վոտքերով փոքրիկ թռչունները միայն կարող են մտնենալ կերին. խոշոր և կամ թույլ վոտքերով թռչունները, որինակ աղաձիկն, չեն կարող այնտեղ կանգնել:

Քամուց պաշտպանելու համար կերամաններն այնպես են շինում, վոր հողմացույցի նման ձողի վրա պտտվեն: Միշտ քամու կողմը դարձած առջևի պատը ապակեպատ է, իսկ յետևինը բաց է կամ անցք ունի տախտակով ծածկված, վոր փոքր թռչուններ միայն մտնեն: Հողմացույցի դեր կատարող յետևի թևերը՝ միաժամանակ և հարմար թառեր են, վորոնց վրայից թռչունները հեշտությամբ փոքր անցքով ներս են սահում:

Վերջապես ամենասրամիտ հարմարություններից մեկն էլ վորսա-կերային ողակն է, վոր միջատների համար վոր-



Նկ. 35. Հողմացույցի նման պտտվող կերաման



Նկ. 36. Կերատնակ Հիլբերսդորֆի


սային է, իսկ թռչունների համար՝ կերային: Ամառը ծառի բնի շուրջը մոմած և ծալքավոր թղթե լայն ողակ են փաթաթում և վերին մասում պարանով կապում: Կապած տեղում թուղթը սեղմ հրպվում է բնին, իսկ դեպի ցած նրա տակի ծայրը բաց անցքեր են ստացվում: Հարմուկ դառնալու համար թրթուրները մտնում են այդ անցքերը և թռչունները կտցում են



Նկ. 37. Վորսա-կերային ողակ մտնում են այդ անցքերը և թռչունները կտցում են



նրանց: Հատկապես ձմռան դեմ բազմաթիվ զանազան միջատներ են լցվում այդ վորսա-կերային ողակների տակ: Այսպիսով թռչունները ձմեռը բնական կերի պաշար են



Նկ. 38. Կերասեղան շոփ

ունենում: Չմռան վերջն ողակների մնացորդները պետք է ծառերի վրայից վերցնել և այրել, վոր մնացած միջատները վոչնչանան:

### ՊԱՅՔԱՐ ՈԳՏԱԿԱՐ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍՏՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ

Ոգտակար թռչուններին վնասող բոլոր եակները կարելի չե չերկու խմբի բաժանել՝ ա) մշտական թշնամիներ և զ) ժամանակավոր թշնամիներ, վորոնք վորոշ պայմաններում են միայն վնասում:

Առաջին խմբից են թափառող «վայրի» և ընտանի կատուն, շունը, զանազան կրծողներ, կաշաղակը, ճայը և չերկու բազաները:

Կատուն թռչունների և մանավանդ փոքր թռչունների ամենամեծ թշնամին է: Ամենից շատ նա վնասում է գարնանը՝ ավերելով գետնի և ծառերի վրա գտնվող բները: Հաճախ ծնող թռչուններն իրենց սերունդը պաշտպանելիս ընկնում են սոսկալի գիշատիչի ճանկը: Կատուն հարձակվում է թռչունների վրա նաև լողալու ժամանակ, չերք նրանք թրջված են լինում և չեն կարողանում թռչել:

Բնասերների մեծագույն մասը շատ մութ է պատկերացնում կատունների հասցրած հսկայական վնասը: Իսկ ամբողջ աշխարհի թռչնասերները կատունների դեմ անընդհատ պայքարի մեջ են:

Կատուն վորսի չե չերնում առավորը շատ վաղ՝ լուսադեմին: Լուսի առաջին շողերի հետ այդ գիշատիչը հարձակվում է բների վրա և հաճախ սպանում ձագերին տաքացնող և սոսկալի թշնամուց պաշտպանող թռչնակին:

Պարզ է, վոր անտեր կատունների դեմ վճռական կռիվ պետք է մղել:

Կենդանիները հովանավորող և թռչունները պաշտպանող ոտաբերկրյա ընկերություններն իրենց արամագրություն տակ տանյակ և հարյուրավոր թակարդներ ունեն: Նրանք այդ թակարդները դնում են քաղաքային պարտեզներում, պուրակներում, անտառներում և այգիներում: Այս ձևով նրանք տանյակ և հարյուր հազարավոր վնասակար գիշատիչներ են վորսում և վոչնչացնում:



Թռչնագետ Ն. Ն. Սոսովի զխողովի թռչունների համա-  
ձայն թափառող շներն ել պակաս վնաս չեն հասցնում:  
Նրանք լողալով անցնում են գետերը և գնում ջրային թռչ-  
ուններով հարուստ վայրերը: Անհրաժեշտ է անխնա վո-  
չընչացնել ինչպես կատուները, այնպես ել թափառող շները:

Առնետները, մկները և այլ կրծողներն ել քիչ չեն  
վնասում թռչուններին՝ ձվերը և ձագերը վոչնչացնելով:  
Նրանց դեմ պետք է կռվել թակարդներով կամ ընտանի  
բուերով, վորոնք իբր վնասակար կրծողների վոչնչացնող-  
ներ տնտեսության մեջ անփոխարինելի լին:

Մի շարք կենդանիներ ել կան, վորոնք յերբեմն վնաս  
և յերբեմն ել ոգուտ են բերում մարդուն: Այսպես՝ ժան-  
տաքիսը և աքիսը վոչ միայն ձու, ձագ և թռչուն են ու-  
տում, այլ և զարմանալի շատ մուկ են վոչնչացնում: Այս  
գիշատիչները պետք է վոչնչացնել միայն այն տեղ, ուր  
նրանց հասցրած վնասը զգալի լի և պահպանել դաշտերում,  
վորտեղ նրանց տված ոգուտներն այնքան շատ են:

## ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Թռչունների մեծագույն մասը չվող է. այսինքն նը-  
րանք գարնանը և ամառն ապրում են իրենց հայրենի-  
քում, վորտեղ և բազմանում են, իսկ տարվա մնացած  
ժամանակն անց են կացնում ավելի տաք յերկրներում:  
Հետևապես թռչունների քանակի աճումը կախված է վոչ  
միայն այն յերկրի բնակչության վերաբերմունքից, վոր-  
տեղ նրանք բազմանում են, այլ և այն յերկրների, վոր-  
տեղ նրանք ձմեռում են: Ահա, սա յե պատճառը, վոր  
թռչունների պաշտպանության գործն ակամայից միջազ-  
գային է դառնում: Գեռ ևս 1868 թվին Գերմանիայի Գյու-  
ղատնտեսական Անտառային համագումարը ցանկութուն  
հայտնեց, վորպեսզի գյուղատնտեսության ոգտակար թռչ-  
ունների պաշտպանության մասին միջազգային համա-  
ձայնագիր կնքվի: 1884 թ. թռչնաբանների միջազգային  
առաջին համագումարը Վիեննայում վորոշում հանեց բո-  
լոր պետութունների միջև համաձայնագիր կնքելու ցան-  
կալիության մասին, հետևյալ հիմունքներով՝ 1. թուլյա-  
տրել թռչունների վորսը միմիայն հրացանով, և տարվա  
առաջին կեսում (հունվար-հուլիս) թռչունների վորսն ու  
առևտուրը միանգամայն արգելել, 2. ամբողջ տարվա ըն-  
թացքում արգելել թռչունների մասսայական վորսը:

1895 թվին Փարիզում գումարվեց թռչունների պաշտ-  
պանության միջազգային հանձնաժողով: Սա միջազգային  
համաձայնագրի մի նախագիծ մշակեց, վորին ստորագրե-  
ցին 16 պետության ներկայացուցիչներ և նախագիծն ու-  
ղարկվեց մյուս պետութուններին՝ համաձայնագրին միա-



նալու առաջարկով: 1902 թվին Փարիզյան համաձայնագրին ստորագրեցին տասն և մեկ պետություն՝ Ավստրո-Հունգարիա, Բելգիա, Գերմանիա, Ֆրանսիա, Հունաստան, Իսպանիա, Փորտուգալիա, Լյուքսեմբուրգ, Մոնակո, Չվիցերիա և Շվեդիա, իսկ հինգ պետություն՝ այն և Անգլիան, Հոլանդիան, Իտալիան, Նորվեգիան և Ռուսաստանն իրավունք վերապահեցին ապագայում միանալու համաձայնագրին: 1910 թվին այդ համաձայնագրին միացան Հոլանդիան և Կանադան: Բացի այդ զանազան լեռկրներում որենքներ հրատարակվեցին թռչունների պաշտպանության մասին. այդպիսի որենքների բնագրեր ստացվեցին հետևյալ պետություններից՝ Ավստրիա, Վենգրիա, Անգլիա, Բելգիա, Հնդկաստան, Գերմանիա, Դանիա, Իսպանիա, Չինաստան, Նորվեգիա, Նոր-Չեյանդիա, Սոմալի (իտալական), Միացյալ Նահանգներ, Թունիս, Չիլի, Շվեդիա և Չվիցերիա, իսկ Երեւորիա, Ռուսաստան, Իտալիա, Բուլղարիա և Մեքսիկա տեղեկացրին միայն նյութերի ստացման մասին:

Ռուսաստանը համաձայնագրին չմիացավ շատ հասկանալի պատճառով, ինքը չափազանց հարուստ և զանազան թռչուններով. բայց այդ թռչուններն ուսումնասիրված չլինելու պատճառով հնարավորություն չկար ոգտակար թռչունների ճիշտ ցուցակը կազմելու, վորպիսին պահանջում էր Փարիզյան համաձայնագիրը:

Թռչունների պաշտպանության գաղափարը տարբեր լեռկրներում տարբեր ձևով և գործադրվում կյանքում, բայց ամենից ճիշտ հիմունքների վրա դրված և Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Հունգարիայում թռչունների պաշտպանության գործը կենտրոնացած է հողագործությունն նախարարության «Թռչնաբանական կենտրոնի» ձեռքում, վորն ունի յերեք բաժին՝ Փառնայի, Տնտեսական թռչնաբանության և ընդ-

հանուր ու Հունգարական թռչնաբանության: Տնտեսական թռչնաբանության բաժինն և ղեկավարում պետական անտառների թռչունների պաշտպանությունը: Նա ունի մինչև 140 պետական կաշարան թռչունների պաշտպանության համար, 13,000 արհեստական բներով և բազմաթիվ մասնավոր կայարաններ, 7500 կերամաններով, ձմեռները թռչուններին կերակրելու համար: Իսկ ընդհանուր և Հունգարական թռչնաբանական բաժինը 250 մասնավոր և 350 պետական թռչնաբանական կայարանների միջոցով տեղեկություններ և ժողովում թռչունների կյանքի պարբերական լեռնույթների (չվելու, վերադարձի, անցի) մասին և թռչուններին ողակավորելու միջոցով պարզում և թռչունների չվելու ճանապարհները և ձմեռման տեղերը:

Թռչունների պաշտպանության գործը լավ հիմքերի վրա յե դրված նաև Գերմանիայում: Հենց միայն Մուլհաուզինի (Վերսալի դաշնագրով անցավ Ֆրանսիային) մոտ գտնվող Չեյբեախի կայարանը յուր պուրակում (12<sup>1</sup>/<sub>2</sub> դեսյատին) և անտառում (150 դեսյատին) ունի 3000 արհեստական բուն: Ձմեռներն այդ կայարանին կից թռչունների պաշտպանության կարճատև դասընթացներ են բացվում: Պակաս աշխատանք չի կատարվում նաև Ֆրանսիայում, Անգլիայում և մյուս լեռկրներում:

Ռուսաստանում թռչունների պաշտպանության հարցն առաջ յեկավ 1872 թվին Մոսկվայի Կլիմայահարմարեցման ցուցահանդեսում, վորով հետաքրքրվեց «Կենդանիների չովանավորող Ընկերությունը» և թռչունների պաշտպանության համար կազմակերպեց «Ծիծեռնակ» անունով Մալիայան միություններ: Նույն ընկերությունը կազմակերպեց նաև Կանանց Լիգան, սրանց նպատակն էր կովել կանացի մողաների դեմ, վորի պատճառով ահագին բանակության մեջ ոգտակար թռչուններ են վոչնչացվում:

Լենինգրադի Անտառային Ինստիտուտի պրոֆեսոր



Դ. Կայգործողովի ջանքերով կազմակերպվեցին բազմաթիվ կայարաններ թուշուհների շուն «անցրե և վերադարձը» դիտելու համար, այդ կայարանների տվյալների հիման վրա գրեց նա իր արժեքավոր թուշնաբանական աշխատությունները: Այնուհետև մի շարք մասնագետներ և սիրողներ զբաղվեցին թուշուհների ուսումնասիրություն և պաշտպանությունների գործով:

1911 թվին, Հունգարական Թուշնաբանական Կենտրոնի օրինակով, կազմակերպվեց Ռուսական Թուշնաբանական Կոմիտե յերեք բաժիններով՝ 1. Թուշուհների ողակավորման, 2. Թուշնաֆենոլոգիական և 3. Թուշուհների պաշտպանություն: Կոմիտեն կարողացավ իր աշխատանքների հետ կապել մի քանի հարյուր թուշնաբանական կայարաններ և դրանց մեջ ցրեց 10,000 ողակ՝ թուշուհներին ողակավորելու համար: Հարաբերություն սկսվեց Արևմտյան Յևրոպայի թուշնաբանական գլխավոր հիմնարկների հետ և տեղեկություններ հավաքեց Ռուսաստանում ողակավորած թուշուհների 200 հանդիպման մասին դանազան յերկրներում, վորով կոմիտեն կարողացավ պարզել մի շարք թուշուհների շվելու ճանապարհները և ձրմեռման տեղերը: Պատերազմի և նրան հաջորդած քաղաքական անցքերի հետևանքով ցրվեցին Կոմիտեի բոլոր աշխատակիցները և այժմ ստիպված են նորից սկսել աշխատանքները:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ «ԹԻՉՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԽՄԲԱԿ»

Բնութշունը սիրող յերեխաների ընդհանուր ժողովում ուսուցիչը կամ աշակերտ ձեռնարկողները դպրոցականներին ծանոթացնում են «թուշուհների բարեկամների խմբակի» նպատակների ու խնդիրների հետ և առաջարկում են իրենց հովանավորություն ու պաշտպանություն

տակ առնել թուշուհները: Տեղի յե ունենում խմբակի անդամների ցուցակագրում:

Ընտրում են «խմբակի» վարչութիւն (նախագահ, փոխնախագահ և քարտուղար), վորին հանձնարարում են մշակել խմբակի կանոնադրութիւնը և վորոշել անդամների պարտականութիւնները:

Կազմակերպություն հետևյալ ժողովին «խմբակի» կանոնադրութիւնը քննվում և հաստատվում է:

Յանկայի յե, վոր խմբակի նիստերը տեղի ունենան ամիսն առնվազն մեկ անգամ:

Խմբակի անգամ կարելի յե ընդունել նաև դպրոցավարտ պատանիներին ու հասակավոր բնասերներին:

Խմբակի գործունեություն մեջ կմտնի.

1. Կազմակերպել շրջագալութիւններ և զբոսանքներ զեպի անտառ, այգի, դաշտ, մարգ և այլն՝ թուշուհներին ուսումնասիրելու նպատակով:

2. Բնութշուն կենդանի անկյունում կազմակերպել թուշուհների բաժին:

3. Նիստեր գումարել թուշուհների կենսաբանություն և պաշտպանություն վերաբերող զանազան խնդիրներ քննարկելու համար:

4. Կազմակերպել ծառաստաններ ոգտակար թուշուհների համար:

5. Պաշտպանել թուշուհները բնական թշնամիներից:

6. Պատրաստել արհեստական բներ, կերամաններ, ջրամաններ և այլն:

7. Կերակրել ոգտակար թուշուհներին ձեռովա ամիսներին:

8. Հրատարակել ամսագրեր:

9. Կազմել թուշուհների կյանքի օրագիր—օրացույցներ և աշխատանքի մասին զեկույցներ պատրաստել:

10. Գրագրութիւն պահել հարևան դպրոցների «խմբակների» հետ:



11. Թուշունները պահպանելու հաջող փորձերի նկարագրերը և նրանց հետաքրքիր լուսանկարները տալ տեղական լրագրերին և ամսագրերին.

12. Կազմել թուշունների վերադարձի և չվի աղյուսակներ և նկարագրել նրանց տվյալ վաչրի կաշանները.

13. Գարնանը (մարտ-ապրիլ) և աշնանը (սեպտեմբեր-հոկտեմբեր) կազմակերպել «խմբակի» տոներ՝ ծառեր տնկելով և թուշունների համար արհեստական բներ, փըշակներ ու կերամաններ կախելով.

14. Կազմակերպել «թուշունների պաշտպանության» ցուցահանդես, վորտեզ ցուցադրվելու լին՝

ա. Արհեստական բներ, կերամաններ և առհասարակ պաշտպանողության զանազան հարմարություններ, վորոնց նպատակն ոգտակար թուշուններ գրավելն է.

բ. Ինչո՞վ են թուշունները կերակրվում՝ ազատ բնության մեջ և ինչո՞վ պետք է կերակրել նրանց ձմեռը.

գ. Ինչպես կովել թուշունների թշնամիների դեմ.

դ. Գրքեր, ամսագրեր և թերթիկներ թուշունների կյանքի ու պաշտպանության մասին.

ե. Թուշունների պատկերներ և իրենց՝ չերեխաների ձեռքով պատրաստած նկարներ.

զ. Թուշնային խաղեր.

է. Թուշունների ողային ուղիները.

ը. Քաղվածքներ պետական որենքներից թուշուններ վորսալու և նրանց պաշտպանության մասին.

15. Ծանոթանալ թուշունների կյանքի ու պաշտպանության մասին լեղած զանազան հրատարակությունների հետ.

16. Կազմել ցուցակներ.

ա. Տվյալ տեղում մշտապես ապրող.

բ. Թափառող և

գ. Չվող թուշունների.

17. Տարածել թուշունների պաշտպանության գաղափարը բնակչության մեջ.

ա. Տեղեկություններ տալ թուշունների մասին տեղական պարբերական մամուլում.

բ. Տարածել թերթիկներ թուշունների և նրանց գյուղատնտեսությանը տված ոգուտանների մասին.

գ. Կազմակերպել դասախոսություններ թուշունների պաշտպանության մասին.

դ. Տեղական խրճիթ-ընթերցարանին մատակարարել գրքեր և ամսագրեր թուշունների մասին.

ե. Պահել «բնության որագիր» և զեկուլցներ տալ խմբակի գործունեություն ու շրջանի բնական հարստությունների պահպանման գործի զարգացման մասին.

զ. Կազմակերպել ծառաստաններ, ծառատունկեր, ցուցահանդեսներ.

է. Նշել հիմնական ուղիները, վորոնցով պետք է ընթանան աշխատանքները:

Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր սա ծրագրի ուրինակ է միայն: Յերկրորդ՝ նա այնքան լայն է, վոր մի խմբակի համար հնարավոր չե նրա մեջ շոշափած բոլոր հարցերն ընգրկել: Առաջագրությունները ցուցակից սկզբում ընտրում են առաջնակարգ և չերեխաների ուժերի համար մատչելի հարցերը: Բայց վերցրած թեմաներն ըստ հնարավորության լրիվ են մշակում, վորից հետո խմբակն իր նվաճումների մասին հաղորդում է բոլոր դպրոցականներին կամ տեղական բնակչության: Հաջողությունը վոգևորում է մասնակցողներին, նոր անդամներ է գրավում, վորից հետո խմբակը կարող է իր գործունեությունն ավելի ու ավելի ծավալել:

Որինակի համար բերենք Սմոլենսկի նահանգի Վյադեմսկի գավառի Յերմոլենկա գյուղի պիոներների կազմակերպած ցուցահանդեսը:



Ահա թե իրենք աշակերտները, գյուղատնտես Լեւոնին գրած նամակում, ինչպես են նկարագրում այդ ցուցահանդեսը.

«Արհեստական բների ցուցահանդեսը կայացավ ապրիլի 2-ին: Պատրաստել էլինք ընդամենը 48 բուն: Յերկար ժամանակ նախապատրաստվում էլինք այդ ցուցահանդեսին: Սկսեցինք փետրվարին, բները բերում էլին մինչև մարտի 31-ը: Այդ բները զանազան մեծության և ձևի էլին. կային և՛ մեծերը, և՛ միջակները, և՛ փոքրերը: Մեր ժողովին վարչութիւնն էլինք ընտրել, վոր և ընդունում էր բները: Յերեխաները դպրոցում զեկուցումներ էլին պատրաստվում: Բոլոր խմբերից էլ կային զեկուցող պատրաստողներ: Մի քանիսը թուշուններ էլին նկարում: Մենք այսպիսի զեկուցումներ էլինք պատրաստում. «Ժեռը և նրա ոգուաները», «Ոգտակար և վնասակար թուշուններ», «Արհեստական բներ թուշունների համար» և այլն:

Բոլորն էլ թուշուններ էլին նկարում՝ ընտանի, վաղրի, վորոնք ծառերի վրա չեն ապրում, զիշատիչ, յերգեցիկ, ջրային և շատ ուրիշ թուշուններ: Ընդամենը 150 թուշնակ էր նկարված: Տաս հատ միայն ժեռ էր նկարված: Նկարել էլին նաև այսպիսի պատկերներ. «Կոռնկները թուշում են», «Ինչպես էլինք մենք արհեստական բներ պատրաստում» և այլն:

Յերեկոները մենք պատի լրագիրն էլինք գրում: Մեր բոլոր զեկուցները գրեցինք նրա մեջ, բացի այդ մի բաժին էլ կար այս վերնագրի տակ. «Մեր դիտողութիւնները թուշունների վրա՝ ժեռերի, ճայակների, ճուռակների և այլն»: Լրագիրը կազմում էր վեց հոգուց ընտրած խմբակուր: Յերբեմն յերկար պարապում էլինք նաև յերեկոները: Լավ լրագիր գուրս չեկավ՝ մեծ, բազմաթիվ նկարներով. կային հետևյալ նկարները՝ արհեստական բներ, կերամաններ, գարունը գյուղում և շատ թուշնակներ:

Մեր յոգունքներն էլին՝ «Ժեռերը մեր բարեկամներն են», «Բուն շինիր ժեռի համար», «Կազմակերպիր թուշունների պաշտպանութեան խմբակներ»:

Խմբագրութիւնը հողվածներ շատ ստացավ, բայց լրագրի մեջ միայն մի քանիսը տեղավորեցինք: Մեզանի մեկը ցուցահանդեսի պատմութիւնն էր պատրաստում զեկուցելու՝ թե ինչպես էլինք պատրաստվում ցուցահանդեսին: Հատկապես մեծ ուշադրութիւն էլինք դարձնում ոգտակար թուշունների վրա, վորոնք ոգուտ են բերում գյուղատնտեսութեանը: Մենք բներ էլինք շինում և դրանով թեև փոքր չափով, բայց մեծացնում էլինք բերքը, բարձրացնում էլինք գյուղատնտեսութիւնը, կատարում էլինք Իլլիչի պատգամները...»:

Այնուհետև յերեխաները շարունակում են.

«Հասավ ապրիլի 2-ը: Յուցահանդեսը բացեցինք ժողովով: Նախագահութիւնն ընտրեցինք ութ հոգուց՝ յերեխաներից, շրջործկոմի նախագահից, մեր գյուղատնտեսական ընկերութիւնից, աղջիկների կազմակերպութիւնից, կոմյերիտմիութիւնից: Յուցահանդեսին շատ մայրեր, ծնողներ կային. հայրեր էլ էլին յեկել: Յուցահանդեսը բացվեց «Խնտերնացիոնալով»: Մեր ընկերներից մեկը IV խմբակից բացեց ժողովը, մյուսը քարտուղարն էր: Սկսվեցին զեկուցումները. զեկուցներ շատ կային. կար և յերգ, արտասանութիւն: Հանձնաժողովը նշեց ամենալավ աշխատանքները, պարգևատրվեցին գյուղատնտեսական գրքուկներով: Այդ ցուցահանդեսը մեք առաջին գաւառային տունն էր: Բոլորն ուրախ էլին: Ժողովը բանաձև հանեց: Մենք շատ էլինք ցավում, վոր հրավիրվածներին շատերը չէլին յեկել: Վերջում գյուղատնտեսական ընկերութիւնը մեզ բողոքիա շատ նվերներ տվեց: Տեսնելով ժեռերի՝ միջատակեր թուշունների տված ահագին ոգուտը, վորոշեցին բնակչութեան մեջ ագիտացիա մղել և



ծնողները ու առհասարակ բնակչութիւն լայն ոժանդակութեամբ արտադրական ցուցահանդեսներ հաճախ կազմակերպել: Ժողովից հետո մենք կազմակերպեցինք բնութիւն պաշտպանութեան խմբակ: Իսկ այժմ բոլոր յերեսխաներն անդամ են այդ խմբակին»:

16 ապրիլի 1925 թ.

ՆՅՈՒԹԵՐ  
ՊԼԱԿԱՏՆԵՐԻ ՅԵՎ ԼՈՂՈՒՆԳՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Մանուկներ, պաշտպանք բնութշունը և թռչուններին. առանց ձեզ մենք անգոր ենք:
2. Պաշտպանք բնութիւն գեղեցկութունը և մի վոչընչացնք թռչուններին:
3. Առանց թռչունների չերկրագործութուն ել չի լինի:
4. Յեթե բոլոր թռչունները վոչնչանան, իսկույն սով կառաջանա:
5. Վորքան շատ լինեն թռչունները, այնքան քիչ կը լինեն միջատներ և առատ կլինի չերկրի բերքը:
6. Թռչուններին պաշտպանելու համար հարկավոր է նրանց սիրել, իսկ սիրելու համար հարկավոր է նրանց ճանաչել:
7. Մեր դաշտերը, այգիներն ու անտառները միջատներից պաշտպանելու համար անհրաժեշտ է ամեն տեղ թռչունների համար նպաստավոր պայմաններ ստեղծել, թռչուններին գրավել և պաշտպանել:
8. Թողեք հրացանը և լուսանկարչական ապարատը վերցրեք, դա վորսի ամենահետաքրքիր և անմեղ ձևն է:
9. Մանուկներ, դուք յեղեք թռչունների հավատարիմ բարեկամները և աշխատեք ամեն կերպ ոգնել նրանց:
10. Այգիների բերքի 30<sup>0</sup>/<sub>0</sub>-ը միջատներն են վոչընչացնում, իսկ զրանց դեմ կովելու ամենաեթան միջոցը թռչուններն են, մի վոչնչացնք թռչուններին, այլ նպաստեք նրանց բազմանալուն:
11. Թռչունների բները պաշտպանք կատուններից, նրանք թռչունների ամենասոսկալի թշնամիներն են:



12. Չավերեք թռչունների բները, այլև ինքներդ արհեստական բներ շինեք նրանց համար:

13. Չմեռը մի մոռանաք ձեր բարեկամ թռչուններին, նրանք քաղցած են, կերակրեք նրանց և պաշտպանեք:

14. Թռչունները վոչնչացնում են ճանճերին և մոծակներին, վորոնք վարակիչ հիվանդություններ են տարածում:

15. Գիշատիչ թռչունները վոչնչացնում են վնասատու կրծողներին:

16. Գիշատիչ թռչուններին և բուերին սպանողը գյուղատնտեսության թշնամին է:

ՆՅՈՒԹԵՐ «ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՏՈՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

### Ա Ն Յ Ա Ն

Ե՛, ջան, անցան

Բուք ու բորան

Չմեռ պապին

Չյունի հետ.

Հոփս ե խաղում

Սար ու դաշտում

Ողբ պայծառ,

Բուրավետ:

Հրես կգան

Շարան, շարան

Նախշուն հավքեր

Յերգեցիկ.

Իաշտ ու անտառ

Այգի ու սար

Շոր կհազնեն գեղեցիկ:

Ե՛, ջան, շուտով

Յերգ ու տաղով

Կգա գարուն

Յանկալի.

Պայծառ արև,

Կանաչ տերև

Խաղ ու ծաղիկ

Կբերի:



## Գ Ա Ր Ո Ւ Ն

Գարնան շաղով,  
 Անուշ տաղով  
 Ծիծառն լեկավ կարապետ.  
 Յողաշաղաղ  
 Վարդը չքնաղ  
 Ժպտաց իսկուչն նրա հետ:

Դաշտ և արոտ,  
 Վաղուց կարոտ  
 Զերմ արևին կենսատու,  
 Այ ու ալվան,  
 Կանաչ հագան  
 Վողջունեցին իրարու:

Զոր ու անտառ,  
 Հովիտ ու սար  
 Գունն գունն ծաղկով դարգարուն,  
 Իրար գրկում.  
 Յերգ են լերգում՝  
 «Վսն, ինչ սիրուն ե գարուն»:  
 Գ. Մեսյան

## Ա Ր Ա Գ Ի Լ

Արագիլ, բարով լեկար,  
 Հնչ արագիլ, բարով լեկար,  
 Իու մեզ գարնան նշան բերիք,  
 Մեր սրտերը ուրախ արիք:

Արագիլ, չերբ զընացիք,  
 Իու մեզանից չերբ զընացիք  
 Հա փչեցին բուք ու բորան  
 Ծաղիկները ամեն տարան:

Արագիլ, բարով լեկար,  
 Հնչ արագիլ, բարով լեկար,  
 Բունդ շինի դու մեր ծառին  
 Մեզ մոտ մնա ամբողջ տարին:  
 Հ. Թումանյան

## Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ Ի Ն

Մարտն անցավ, հասավ ապրիլ գեղեցիկ,  
 Հեռու աշխարհից լեկավ ծիծեռնիկ,  
 Իու բարով լեկար, գարնան կարապետ,  
 Բուն շինողներից, ամենից վարպետ:

Պատուհանիս մոտ շինի քո բունը,  
 Անուշ ճովողով չերգե գարունը,  
 Զու ածա, հանե գեղեցիկ ձագեր,  
 Յեվ մնա մեզ մոտ մինչև սեպտեմբեր:  
 Ռ. Պաս.

## Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ Ի Ն

Իու կապուտակ ծովով արի,  
 Թեթև, թեթև թևով արի,  
 Ծովի փրփուր լանջով արի,  
 Գարնան չերգով, կանչով արի.  
 Արի, արի, սիրուն ծիծեռ,  
 Արի, արի գարուն դու բեր:

Սևիկ-մեվիկ աչիկ ունես,  
 Մկրատաձև պոչիկ ունես,  
 Ծովի փրփուր լանջով արի,  
 Գարնան շնչով, կանչով արի:



Արի, արի, սիրուն ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:

Ծիծեռնակով գարուն կգա,  
Անծիծեռնակ գարուն չկա.  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան շնչով, կանչով արի.

Արի, արի, սիրուն ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:  
Ա. ք. ԽՆԿՈՅԱՆ

### ՄԻԾԵՌՆԱԿԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծիծեռնակը բուն է շինում,  
Յեվ շինում է և՛ յերգում,  
Ամեն մի շուղ կպցնելիս՝  
Առաջվա բունն է հիշում:

Մեկ անգամ երնա բուն շինել,  
Յեվ շատ անգամ կարկատել,  
Բայց այս անգամ վերադարձին,  
Բունն ավերակ էր գտել:

Այժմ նորից բուն էր շինում,  
Յեվ շինում էր և՛ յերգում,  
Ամեն մի շուղ կպցնելիս՝  
Առաջվա բունն էր հիշում:

Նա հիշում էր անցած տարին  
Իր ունեցած ձագերին,  
Վորոնց ճամպին հափշտակեց  
Արյունարբու թշնամին:

Բայց նա կրկին բուն էր շինում,  
Յեվ շինում էր և՛ յերգում,  
Ամեն մի շուղ կպցնելիս՝  
Առաջվա բունն էր հիշում:

Ղ. Աղայան

### ԹՌՉՆԻԿՆԵՐ

Յես սիրում եյի մանուկ հասակում  
Թռչնի ձագերին՝ բներից ընկած.  
Վորոնում էյի նրանց մեր այգում,  
Առնում թփերից զգույշ ու կամաց,  
Յեվ տուն բերելով՝ հյուսում յեռանդով  
Վանդակների մեջ բնիկներ քնքուշ.  
Հոգում, մեծացնում սիրով ու խանդով  
Խեղճ վորբուկներին անճար ու անուժ...:

Ու յերբ ձագուկներն ույժ առած արգեն,  
Կուզելին լողալ լուսի շողերում,  
Բաց էյի թողնում նրանց թևազեն,  
Վոր թռչեն անվախ, վրխտան թփերում:  
Յեվ թռչում էյին, ճըլվըլում, ճըջում.  
Անհուն ցնծությամբ լցվում էր հոգիս.  
Յես նորից նրանց յետ էյի կանչում  
Ու գալիս էյին — ունկնդիր խոսքիս...

Ա. ՄԱՏՈՒՅԱՆ

### Չ'Ե ՎՈՐ ՆԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՐ

Յես նոր վորսորդ եյի...  
Անցնում էյի խիտ և կանաչ անտառով հրացանն  
ուսիս:



Հանկարծ սաղարթախիա թփերի միջից դեմս յելավ  
մի թռչնիկ և..... չես սպանեցի նրան: Բայց չգիտեմ ան-  
բնե՞րը փսփսացին, թռչուննե՞րը ծլվլացին, թե՞ սիրտս  
մրմնջաց. «ինչո՞ւ սպանեցիր.... չե՞ վոր նա գեղեցիկ եր...»:

Մ. Թ.

## ՓԼՅՏՓՈՐԸ

Ահա յեղևնին  
Յեվ վրան փայտփոր:  
Նա անկոչ հյուր ե,  
Ծառին ամեն որ  
Կացով ե տալիս,  
Պտույտ ե գալիս:

Մի բեխլի բզեզ  
Կամ մի բան եղպես  
Կացին ե գալիս,  
Բկին ե տալիս:

Ա. ք. Խնկոյան

## ԿԱԲԱՎԻ ԳՈՎԲԸ

Արև քացվեց թուխ ամպերեն,  
Կաքավ թռավ կանաչ սարեն,  
Կանաչ սարեն՝ սարի ձերեն,  
Բարև բերավ ծաղիկներեն.

Սիրունիկ, սիրունիկ,  
Նախշուն կաքավիկ:

Քո բուն հյուսած ծաղիկներով՝  
Շուշան, նարգիզ, նունուֆարով:

Քո տեղ լցված ցող ու շաղով.  
Քնես-կեխես չերգ ու տաղով.  
Սիրունիկ, սիրունիկ,  
Նախշուն կաքավիկ:

Քո թև փափուկ ու խատուտիկ,  
Պզտիկ կտուց, կարմիր տոտիկ,  
Կարմիր-կարմիր տոտիկներով,  
Կշորորաս ճուտիկներով.  
Սիրունիկ սիրունիկ,  
Նախշուն կաքավիկ:

Յերբ կը կանգնես մամռոտ քարին,  
Սաղմոս կասես ծաղիկներին,  
Սարեր ձորեր զվարթ կանես,  
Իարգի ծովեն սիրտ կը հանես.  
Սիրունիկ, սիրունիկ,  
Նախշուն կաքավիկ:

Հ. Թումանյան

## ԾԻՏԻԿՆԵՐԻ ԿՈՒՎԸ

I

Ծիլի—վիլի,  
Ծիլի—վիլի,  
Ծիտիկները հյուր են յեկել,  
Մեր պարտեզ.  
Հյուր են յեկել, հազար բարև  
բերել մեզ:

Ծիլի—վիլի,  
Ծիլի—վիլի,  
Ծլվլում են, թռվում են.



Ժառից-ծառ,  
Թովոում են, թռչկոտում են  
անդալար:

## II

Ծիվ, ծիվ, ծիվ, ծիվ...

Ծիվիկն ասավ.—

- Ես թանն իմն ե,

Ես ծառն իմն ե,

Յես եմ անկել ինձ համար:

Չե, չե, չե, չե,

Չիվիկն ասավ.—

— Յես եմ անկել

Ու հյուր յեկել,

Վոր քեֆ անեմ

Ես ամառ:

Յիվ, ցիվ, ցիվ, ցիվ,

Սևիկն ասավ.—

— Գնա, կորի,

Ես սալորի տերը յես եմ

դու ո՞վ ես.

Տիվ, տիվ, տիվ, տիվ,

Թևիկն ասավ,

Ի՞նչ ես եկել,

Աչքդ անկել,

Ու փնթփնթում քեզ ու քեզ:

## III

Ծիվիկն ասավ,

Չիվիկն ասավ,

Մի կողմից ել

Սևիկն ասավ,

Թևիկն ասավ:

Ասին, ասին,

Խիսա բարկացան.

Մեկ ել միասին

Հոպ, վեր կացան,

Իրար անցան:

Մեջներն ընկավ կոիվը,

Աշխարհ կալավ ծիվ-ծիվը,

Մեկ զմեկու գոեցին,

Իրար կողքը բոեցին,

Ծառից իջան կտուրը,

Կարից ընկան տան դուռը,

Փոփոացրին պոչ ու թև,

Մեկ տակ իջան, մեկ վերև:

Ծիվ, ծիվ, ճիվ, ճիվ,

Ծլվլացին, թովոացին,

Մեկ ել հանկարծ

Բաժանվեցին ու գնացին:

Ծիվիկն լերավ սալորին՝

Խեթ-խեթ նայեց բոլորին,

Չիվիկն լերավ ծառի ճյուղ,

Դես, դես նայեց աներկյուղ.

Իսկ թևիկն ու սևիկը.

Թռան տեղից վերացան՝

Մեր պարտեզից հեռացան:

Հ. Աղաբաբ

### ԿԱՅԵԲ ԹՌՉՈՒՆՆԵՐ

Սիրուն թռչուններ, ձեզ բան եմ ասում,  
Դուք ո՞ւր եք գնում, ի՞նչ կա հյուսիսում,



Յուրա ե հյուսիսը, ցուրտ, սառնամանիք,  
 Կացեք, թռչուններ, այնտեղ ի՞նչ ունեք:  
 Արևն հարավի ամպ չի ճանաչում,  
 Հարափն ե լողում վոսկի ճաճանչում,  
 Հարավը ցուրտ չի, ցուրտ, սառնամանիք,  
 Կացեք, թռչուններ, այնտեղ ի՞նչ ունեք:

Ողում միասին թռչուններն ասին.—

— Են ցուրտ, անարև, հեռու հյուսիսում  
 Մեր հայրենիքն ե, մեզ են սպասում:

Ա. ք. Խնկոյան

### ԱՇՈՒՆ

Դաշտ ու այգի գեղին հագան,  
 Ծառ ու ծաղիկ մերկացան,  
 Թռչունները յերամ-յերամ  
 Մեր աշխարհից հեռացան:

Որը մռայլ, ցուրտ ու տխուր  
 Բարակ անձրև ե մաղում.  
 Մեզն ե պատել սար ու բլուր,  
 Ել մարդ չկա դաշտերում:

Հ. Հայրապետյան

### ԾՏԻ ԿԱՐՈՏԸ

Չմեռ ե, ցուրտ, ծիտը ծառին  
 Լաց ե լինում ու սգում.  
 Ամռան որը միտն ե բերում,  
 Միտն ե բերում, կարոտում:

Ի՞նչ որ ելին: Արևը տաք,  
 Կերակուրը շատ, առատ,

Ծառը կանաչ, վոստը դալար,  
 Վոստի վրա չերգ ու պար:

Այժմ ցուրտ ե, դատարկ փորով,  
 Նա նստած ե չոր վոստին,  
 Լավ որերը միտն ե բերում,  
 Չի դիմանում կարոտին:

Կ. Ն.



\* \* \*

«Պաշտպանիր թռչուններին» ժողովածուն փոխադրված է В. Поляков-ի «День птиц» ժողովածուից, փորից վորոշ գլուխներ ամբողջովին թարգմանված են, մյուսները հարմարեցրած մեր պայմաններին, վորքան այդ հնարավոր է յեղել: «Թռչունների պաշտպանութունը զանազան յերկրներում» գլուխը կազմված է ինքնուրույն կերպով, ոգտվելով պրոֆ. Россинский. «Охрана птиц» գրքից: Ժողովածուի վերջում բերված փոտանավորներն ու յերգերը վերցրած են մեծ մասամբ «Հասկերից» յեւլ հ-լեզվի դասագրքերից: Առանձնապես դժվարութուն ենք զգացել «սեզոնային յերեվույթներ թռչունների կյանքից» գլուխը կազմելիս, վորովհետեւ Հայաստանի թռչունների կյանքը վոչ վոր չի ուսումնասիրել յեւլ այդ մասին տեղեկութուններ չկարողացանք հավաքել:

Հրատարակութեան հանձնելով սույն ժողովածուն հույս ունենք, վոր պիտներական կազմակերպութուններն ու դպրոցները, զավառագիտական ընկերութունների ճյուղերը կոգտվեն գրքում բերված խորհուրդներից յեւլ դիտողութուններ կատարելով թռչունների վրա, շեն զյանա իրենց ձեռք բերած տվյալներն ուղարկելու Յերեւան, Կենտրոնական Մանկավարժական թանգարան, վորպեսզի ապագայում նման ուսումնասիրութուններ կատարողների համար պատրաստի նյութեր լինեն մի տեղ կենտրոնացած: Այդ նյութերը մոտավորապես հետեւյալ բովանդակութունը պիտի ունենան. թռչուններից վորոնք են չվում, վորոնք են մնում, վորոնք ձմեռն են մեզ մոտ գալիս, ի՞նչ ոգուտ կամ վլաս են տալիս, ի՞նչումն է կայանում նրանց վնասակարութունը կամ ոգտակարութունը յեւլ այլն:

ԿԵՆՏ. ՄԱՆԿ. ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻԳՆԵՐ.



**ԳՐԳՈՒՄ ՀԻՇԱՏԱԿԱԾ ԹՈՂՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ  
ՑԱՆԿՆ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ—ՆԱՅԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ**

- Ագռավ մոխրագույն* — Ворона серая  
*Ալկիոն* — Зимородок  
*Ամուրիկ (նախշուն սարյակ)* — Зяблик  
*Այծկիթ* — Козодой  
*Արագիլ* — Аист  
*Արծիվ* — Орел  
*Արաուա* — Жаворонок  
*Արաուսարագե* — Чеглок  
*Արքայիկ* — Королек  
*Աքար* — Рябчик  
*Բագե* — Сокол  
*Բու* — Сова  
*Բուեճ* — Филин  
*Գեղգեղուկ* — Заверушка  
*Դաշտի աղափիկ* — Торица  
*Դրախտապան (վարսակակեր սերինոս)* — Овсянка  
*Յեղնակ* — Щур  
*Յեկքանիկ «Սախա»* — Щеголь  
*Յեղնճուկ* — Камышевка  
*Յեղջերաբու* — Филин  
*Յերաշտանավ* — Синичка  
*Ընկուզաբեկ* — Ореховка  
*Թափառական բագե* — Сапсан  
*Փեռ, տարմ, սարյակ* — Скворец  
*Լոր, լորածարգ* — Перепел  
*Լորածուռակ* — Перепелятник



Խածկաբիկ — Снегирь  
 Խաղտանիկ — Трясогузка  
 Խաչկառուց — Клеет  
 Ծիծառ, կապտափող, կարմրափող  
     և այլն — Варакушка  
 Ծիծեռնակ — Ласточка  
 Ծոփածիծառ — Крачка  
 Ծվծվան — Пищуха  
 Կանաչուկ, կանաչագույն սե-  
     րինոս — Зелenuшка  
 Կանեփնուկ, կանեփակեր — Конопянка  
 Կաչաղակ — Сорока  
 Կարժրատուան — Горихвостка  
 Կարմրափող — Малиновка  
 Կաքավ — Куропатка  
 Կեռնեխ — Дрозд  
 Կիվկիվ, լեղալուրիկ — Чибис  
 Կկու — Кукушка  
 Կորեկնուկ, կորեկակեր — Просянка  
 Կռունկ — Журавль  
 Կավատիկ, ճտճտան կա-  
     վատակեր — Чечетка  
 Կոցար — Кулик  
 Հոզավար — Пустельга  
 Հոպ-հոպ — Удот  
 Հոտաղ-խաբուկ «Չորան խաբուկ»  
     փափուկափոր արտուտ — Хо-  
     хлатый таворнонок  
 Չյան ճնճուկ — Пуночка  
 Ծայ — Сойка  
 Ծայակ — Галка  
 Ծանճորս — Мухоловка

Ծնճուկ (ծիտ) — Воробей  
 Ծուռակ — Сарич  
 Ծտճտան (կտփատիկ) — Чечетка  
 Մորեկ, Մայրի հավ — Тетерев  
 Մաքալուկ «ճանգաղաթև» — Стриж  
 Մեղվաբազե — Копчик стеной  
 Մեղվակուկ «ճանճակուկ» — Щурка  
 Մետաքսազի (ամպեղ) — Свиристель  
 Մկնաբազե — Лунь  
 Ներկարար — Сизоворонка  
 Շահրիկ (շահրահավ) — Славка  
 Շամփրուկ — Сорокопут  
 Շիկահավ, մորեկան,  
     կարմրափող — Малиновка  
 Վորոր — Чайка  
 Պիրու — Иволга  
 Պտտավիղ — Вертишейка  
 Զրարծիվ — Скопа  
 Զրհավ — Дергач  
 Զրցուկ — Выпь  
 Զրսուզակ — Кулик  
 Սարեկիկ — Чиж  
 Սիսեղ — Поползень  
 Սոխակ — Соловей  
 Սպիտակատանիկ — Каменка  
 Սև փայտփոր — Желна  
 Վալդշնեպ — Вальдшнеп  
 Վարդագույն թեռ, «սուրբ հակորի  
     թռչուն «թթի դուշ» —  
     Розовый скварец  
 Տառեղ մորթագույն — Цапля серая  
 Տուլաշ, հատաքաղ, սերմանա-  
     քաղ — Грач



Յախաքլորր—Глухарь

Յախսարեկ—Пеночка

Յին—Коршун

Փայտփոր, ծանկտիկ ծանկու-  
տրտ—Дятель

Փետրուկ—Коньок

Քարաղբեղ—Ржанка





22x15

15/1998p.

4122 6 25 407.

11
56655



5 - 15000

1200